

# **ՓՈՔՐԻԿ ՔՐԻՍՏՈՆՅԱՅԻՆ**

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ  
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ՓՈՔՐԻԿ ՔՐԻՍՏՈՆՅԱՅԻՆ

(խրատական պատմություններ  
փոքրիկ քրիստոնյաների համար)

ՀՏԴ 23/28

ԳՄԴ 86.37

փ 896

Փոքրիկ քրիստոնյային: Խրատական  
փ 896 պատմություններ փոքրիկ քրիստոնյա-  
ների համար /Թարգմ.՝ Կ. Բաբայան. - Եր.:  
Հեղ. հրատ., 2013. 104 էջ:

ժողովածուի մեջ ընդգրկված են  
քրիստոնեական հոգեշահ պատմվածք-  
ներ, որոնք օգտակար կլինեն հատկապես  
փոքրիկ քրիստոնյաների համար:

Գիրքը նախատեսված է մանկական  
ընթերցանության համար:

ՀՏԴ 23/28

ԳՄԴ 86.37

ISBN 978-9939-0-0743-4

© Կարինե Բաբայան

## Թարգմանչի կողմից

Պատմվածքների ժողովածուն ընդգրկում է ինչպես իրական պատմություններ, այնպես էլ վկայություններ, ավանդություններ, ասացվածքներ: Պատմությունները լցված են Աստծո կենդանարար շնչով և փոքրիկ ընթերցողին սովորեցնում են իրենց կյանքում տարբերել լավն ու վատը: Շատ կարևոր է մեր կյանքում ճանաչել Աստծուն, ապրել ճիշտ և քրիստոսի պատգամներով, որպեսզի մեր երկրային ճանապարհն անցնենք առանց փորձությունների: Այս ժողովածուն ընդգրկում է խրատական պատմություններ այն մասին, թե ինչպես պետք է հոգատար լինել ծնողի նկատմամբ («Ի՞նչ են սովորեցնում մեզ մեղուները», «Մեծահոգի աղջիկը»): «Ղոմեական կրկեսում», «Նահատակ աղջիկը» պատմվածքներում նկարագրվում են առաջին քրիստոնյաների սիրանքները, կրած տառապանքները, իսկ հաճախ էլ՝ նրանց մահը: «Մանկական աղոթք» պատմվածքում ամբողջ գիշեր աղոթող մանուկների հավատքը փրկում է իրենց հիվանդ մորը մահվան ճիրաններից: Կարևոր է լինել բարի, մարդասեր, ողորմած,

ինչպես մեր երկնային շայրն է («Թանկարժեք կոպեկը»): Պատմվածքները մեզ սովորեցնում են ուշադիր լինել մեր շրջապատի, մարդկանց, բնության, կենդանիների, բուսականության հանդեպ. սիրով լցված՝ խնամել, հոգ տանել, գուրգուրել ու փայփայել այն ամենը, ինչ տվել է մեզ Տերը. չէ՞ որ մենք էլ նրա մի մասն ենք կազմում: Լինենք արդար, խաղաղասեր, ընթանանք մեր Տեր շիսուս Քրիստոսի պատվիրաններով՝ մեր շուրջը սփռելով միայն լավն ու բարին: Մեր սրտերը թող քար անտարբերությամբ չնայեն աղքատին, հաշմանդամին, այլ մի բարի խոսքով և նույնիսկ մի փոքրիկ օգնությամբ ջերմացնենք նրանց հոգիները («Թանկարժեք կոպեկը», «Դուք ևս օգնե՛ք, երեխանե՛ր»): Իսկ դրա համար պետք է սիրել, ինչպես շիսուս Քրիստոս սիրեց մեզ:

Այս գողտրիկ պատմվածաշարն ավարտվում է Սուրբ Աստվածածնին ուղղված աղոթքով, ու թող Նա բարեխոսի մեզ՝ մեղավորներիս համար, իր Միածին Որդու՝ շիսուս Քրիստոսի առաջ: Ամեն:

Կ. Բաբայան

## ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆԸ

Գալիլիայի սարերի լանջերից մեկի վրա՝ փրթուն բուսականությամբ այգիների մեջ էր գտնվում խաղաղ և քիչ հայտնի Նազարեթ փոքրիկ քաղաքը: Այնտեղ էին ապրում բարեպաշտ ամուսիններ Նովակիմը և Աննան: Նովակիմը Դավթի թագավորական հին ցեղից էր, իսկ Աննան՝ քահանայական ցեղից: Նրանք ապրում էին լիության մեջ, ունեին ոչխարի հոտեր, բայց նրանց ընտանեկան երջանկությունը կատարյալ չէր քանի որ նրանք երեխաներ չունեին:

Նովակիմը և Աննան շատ էին աղոթում, որ Աստված իրենց երեխա պարգևի: Նրանք նույնիսկ ուխտել էին, որ երբ երեխան ծնվեր, նրան Աստծուն ծառայության պիտի նվիրեին: Բայց նրանց աղոթքը չէր

իրականանում: Ժամանակն անցնում էր, և նրանք ծերանում էին:

Նրեաները միայն ընտանեկան ուրախության համար չէ, որ ուզում էին երեխաներ ունենալ: Այն ժամանակ բոլորն էին սպասում Քրիստոս Փրկչի գալուստին, և նրանք, ովքեր երեխաներ ունեին, հույս ունեին, որ գոնե իրենց երեխաները կտեսնեն Նրա բաղձալի Թագավորությունը: Իսկ ով երեխա չուներ, իրեն համարում էր Քրիստոսի թագավորությունից զրկված: Այդ էր պարճառը, որ հրեաները Աստուծոյ բարկության նշան էին համարում ամուսինների երեխա չունենալը:

Մի անգամ Նովակիմը մեկնեց Երուսաղեմ և գնաց քաճար՝ գոհ մատուցելու: Այնպեղ էր նաև Նովակիմի հարևաններից մեկը, որը կոպտորեն հրեց նրան՝ ասելով. «Ինչո՞ւ ես առաջ գնում: Դու արժանի չես գոհ մատուցելու, քանի որ Աստված քեզ գավակ չի պարգևել»: Նովակիմը խորապես վիրավորվեց այդ հանդիմանությունից: Նա փուն չվերադարձավ, այլ գնաց անապատ, որ-



տեղ նրա ոչխարի հոտերն էին արածում: Նա այնտեղ ցանկանում էր հոգով խաղաղվել:

Աննան լսեց ամուսնու վիրավորանքի մասին և շատ տխրեց: Տնային գործերը թողնելով՝ դուրս եկավ այգի և նստեց դափնու ծառի տակ հանգստանալու: Աննան, գլուխը հանկարծակի վեր բարձրացնելով, ճյուղերի արանքում տեսավ ճնճողուկի ձագուկներով լի թռչնի բույնը: Մայր ճնճողուկը եկել և կերակրում էր նրանց: Աննան հոգոց հանեց և ասաց: «Ահա Աստված նույնիսկ թռչուններին է ուրախացնում երեխաներով, իսկ ես այդ ուրախությունը չունեմ»:

Այս բանն էր մտածում Աննան, երբ հանկարծ նրան հայտնվեց Տիրոջ հրեշտակը և ասաց. «Քո աղոթքը լսվեց: Դու դուստր կունենաս, ով ամենից օրհնվածը կլինի աշխարհի բոլոր դուստրերի մեջ: Նրա անունը Մարիամ կդնես»: Լսելով այդ հրաշալի խոսքումը՝ Աննայի հոգին շատ ուրախացավ, և նա շտապեց Երուսաղեմ, որպեսզի տեսնար նրան շնորհակալություն հայտ-

նի Աստծուն: Այդ նույն ժամանակ Աստծու հրեշտակը հայտնվեց նաև Նովակիմին և նույն խոսքերն ասաց նրան՝ ավելացնելով. «Գնա՛ Երուսաղեմ ուրախ սրբով, այնպեղ՝ Ոսկե Դարպասների մոտ կհանդիպես կնոջոջ»: Այնպեղ ամուսինները հանդիպեցին ու միասին մտան փաճար, աղոթք արեցին և շնորհակալություն հայտնեցին Աստծուն, որից հետո վերադարձան Նազարեթ:

Մի քանի ամիս անց Աննան աղջիկ ունեցավ, և նրա անունը Մարիամ դրեցին: Բայց իրենց ուրախության մեջ Աննան և Նովակիմը չմոռացան իրենց խոսքումը: Նրանք պատրաստվում էին Մարիամին նվիրել Աստծուն:

Նրանք սկզբում մտադիր էին դա անել, երբ Մարիամը երկու փարեկան դառնար, բայց Սուրբ Կույս Մարիամը երկու փարեկանում էլ դեռ շատ փոքր էր և թույլ ու չէր կարող ապրել առանց ծնողների օգնության: Այս պատճառով էլ նրանք ընծայումը հետաձգեցին ևս մեկ փարով: Մարիամը Նազարեթում իր ծնողների փանն ապրեց

մինչև երեք քարեկան դառնալը: Իսկ երբ լրացավ նրա երեք քարին, Նովակիմը և Աննան որոշեցին, որ հասել է իրենց դստերը Աստծուն ընծայելու ժամանակը: Այն ժամանակ Աստծուն նվիրվող երեխային Երուսաղեմի փաճար փանելու սովորություն կար: Նովակիմը և Աննան պատրաստեցին ամեն ինչ, որ անհրաժեշտ էր դստերը փաճար փանելու հանդիսավոր օրվա համար:

Նազարեթից մինչև Երուսաղեմ անցնելիք ճանապարհը մոտ հարյուր հինգ կիլոմետր էր: Մարիամի ծնողները կանչեցին իրենց ազգականներին, ովքեր Մարիամի հետ Երուսաղեմ էին գնալու:

Երեք օր ճանապարհ գնալուց հետո ճամփորդները վերջապես քաղաք հասան: Սկսվեց հանդիսավոր երթը դեպի Երուսաղեմի փաճար: Առջևից գնում էին շարականներ երգող երիտասարդ աղջիկներ՝ վառվող մոմերը ձեռքներին, իսկ նրանց հետևից Մարիամի ձեռքը բռնած գնում էին Նովակիմը և Աննան: Երթի ժամանակ նրանց հետ էին նաև իրենց ազգականները

և բազում ժողովուրդ: Նասնելով քաճարի մոտ՝ Մարիամի ծնողները նրան կանգնեցրին քաճար քանող առաջին աստիճանի վրա: Մինչև քաճարի մուտքը քասնհինգ աստիճան կար: Եվ ահա հագիվ էին Մարիամի ծնողները նրան կանգնեցրել առաջին աստիճանի վրա, երբ նա ինքնուրույն՝ առանց կողմնակի օգնության, բարձրացավ քաճարի աստիճաններով:

Ներկաները զարմանում էին տեսնելով, թե ինչպես էր Մարիամը, չնայած իր մանկահասակ փարիքին, բարձրանում աստիճաններով: Տաճարի դիմաց կանգնած՝ Մարիամին դիմավորեց Զաքարիա քահանայապետը՝ Նովհաննես Մկրտչի հայրը: Սուրբ Նոզին լուսավորեց Զաքարիային, և նա բացականչեց. «Մոտեցի՛ր, Անարապ, մո՛տ արի, Ամենօրհնյալ: Մտի՛ր ուրախությամբ քո Տիրոջ Եկեղեցին»: Եվ բռնելով Մարիամի ձեռքը՝ նրան Տաճար փարավ, այնպեղից էլ Սրբություն Սրբոց, ուր միայն ինքն իրավունք ուներ մտնելու փարին մեկ անգամ: Այսպես կատարվեց Մարիամի

մուտքը փաճար: Տաճար մտնելուց հետո Մարիամն այնպեղ մնաց փասներկու փա-  
րի:

Ավանդությունն ասում է, որ Աստուծո Նրեշտակը հայտնվել է Մարիամին՝ Մուրք Գիրքը նրան սովորեցնելու համար: Կույս Մարիամի ժամանակը լրացավ, և հասավ նրա փաճարից դուրս գալու և ամուսնանալու ժամանակը: Բայց Մարիամը քահանայապետին հայտնեց, որ իր ծննդից դեռ շատ առաջ ծնողներն իրեն նվիրել են Աստուծոն, և ինքը ցանկանում է մինչև կյանքի վերջը նվիրվել Նրան: Քահանայապետը և քահանաները Մարիամին հանձնեցին նրա ազգական ութսունամյա Նովսեփ ծերունուն, որը պետք է հոգ փաներ նրա մասին, պահպաներ ու խնամեր նրան:

Տաճարից դուրս գալով՝ Կույս Մարիամը վերադարձավ Նազարեթ և բնակվեց Նովսեփի փանը:

## ՄԱՐԻԱՄԻ ԶԱՐԴԸ

Թագավորն իր սիրելի դուստր Մարիամին գեղեցիկ մարգարտե մանյակ նվիրեց: Նվերը աշխարհի բոլոր գանձերից էլ թանկ էր: Մարգարիպներից ամեն մեկն առանձին-առանձին հազվագյուտ գեղեցկություն ուներ. ամբողջ աշխարհում նրանք հայտնի էին իրենց փայլով, և ամեն մեկը յուրահատուկ անուն ուներ: Առաջին մարգարիպը կոչվում էր սեր, մյուսը՝ ճշմարտություն, երրորդը՝ հեգություն, չորրորդը՝ խոնարհություն, հինգերորդը՝ քնքշություն, վեցերորդը՝ ջանասիրություն և այլն: Երբ Մարիամն իր պարանոցը զարդարում էր այս մանյակով, մարգարիպները վառվռում էին, շողշողում. հրաշք-աղջիկ, աչքդ չէիր կարողանում կտրել նրանից: Նայում էիր, սիրտդ ցնծում էր:

Մտածում ես՝ երանի թե բոլոր երեխաները միշտ այսպիսին լինեին, այսքան սիրունիկ, խնդուն, լուսավոր և սիրալիր:

Միայն թե Մարիամն իր հոր նվերը գնահատել չգիտեր: Եվ քանի որ դեռ շատ փոքր էր, նա չէր հասկանում մանյակի իրական արժեքը: Նա ոչ միայն այն կրում էր կարևոր առիթներով, այլև դրանցով չարաճճիություն էր անում՝ անփութորեն նետելով այս ու այն կողմ: Նաճախ թելը կտրվում էր, մարգարիպները ցրվում էին հատակին, իսկ հետո դրանք դժվարությամբ էին գտնվում: Մարգարիպներից մի քանիսը փչացան. մեկի վրա քերծվածք, մյուսի վրա բծեր հայտնվեցին, և մանյակը կորցրեց իր գեղեցկությունը:

Եկավ մեծ տոնի ժամանակը: Թագավորը խրախճանք էր կազմակերպել: Ջարդարեցին աղջկան, մարգարտյա մանյակը պարանոցին կապեցին: Սակայն մանյակը չէր փայլում, մարգարիպներն էլ չէին շողշողում: Տեսավ հայրը և վշտացավ. «Փոքրի՛կս, այդ ի՞նչ է պարահել: Ինչի՞ց է, որ մանյակն

առաջվա գեղեցկությունը չունի: Խնամքով չպահեցիր դու իմ նվերը, դրա համար էլ այն փչացավ: Բայց և այնպես դեռ կարելի է այն շփելի. քերծվածքները կհարթենք, բծերը կմաքրենք, մանյակը նախկին փեսքին կբերենք. մարգարիտները դեռ թերթնակի են վնասավել: Բայց եթե դու շարունակես իմ նվերի հետ այդպես անփութորեն վարվել, այն վերջնականապես կփչանա: Քերծվածքների փոխարեն ճաքեր կառաջանան, բոլոր մարգարիտները կծածկվեն բծերով, ամբողջ գեղեցկությունը կանհետանա:

Փոքրիկներս, իհարկե, դուք հասկացաք առակը. թագավորն Աստված է, թագավորի դուստրը՝ ձեր հոգին, մարգարիտները՝ մեր առաքինությունները, իսկ բծերը՝ մեր թերությունները: Ճշմարտություն կոչվող մարգարտի վրա մեր անփութության հետևանքով առաջանում են սուտը, խորամանկությունը, կեղծավորությունը. սիրո մարգարտի վրա՝ նախանձը, գոռոզամտությունը, հպարտությունը. հեգուության և խոնարհության վրա՝ կոպտությունը, վիրավորական



բառերը: Այդպես էլ ոչնչանում է մանյակը:  
Երեխանն՛ր, մարգարիպներից յուրաքանչ-  
յուրը հաճախ քննեցեք՝ առանձին-առանձին  
և փեսեք՝ նրանց վրա կա՞ն արդյոք վնաս-  
վածքներ կամ բծեր:

*S. Պետրոսյ քահանա*

## ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՂԶԻԿԸ

Այն, ինչ հիմա կպարմեմ ձեզ, կապարվել է շար փարիներ առաջ Նովգորոդ նահանգի Լյուբանի գյուղում: Մի անգամ հունիս ամսին՝ ցերեկը՝ մոտ ժամը երկուսին, գերի ափի մոտ գտնվող ամառանոցներից մեկի բակ վազելով ներխուժեցին կիսամերկ երկու աղջիկներ, որոնք ամբողջ մարմնով դողում էին: Ջուրը հոսում էր նրանց թափթփված ու գզգզված մազերից: Երբ ամառանոցի փարբեր անկյուններից վազելով անձանոթ աղջիկներին մոտեցան նրանց փեսքից և դեմքերի գունապուրթունից վախեցած մարդիկ, աղջիկները դողդողալով և սպասները կափկափեցնելով, հագիվ բառերն իրար կապելով կարողացան պարմել, որ իրենց քույրը և սպասուհին ջրասույզ եղան, երբ իրենք լողում էին

գեարում, և որ իրենք վազելով եկել են շրապ  
օգնություն խնդրելու՝ խեղդվողներին փրկե-  
լու համար, որովհետև իրենց ամառանոցը  
հեռու է: Այդ լսելով՝ բոլորը վազեցին դեպի  
գեարը, իրենց հետ փանելով աղջիկներից  
մեկին, որպեսզի նա ցույց փա այն փեղը,  
որպեղ խեղդվել էր քույրը, իսկ մյուս աղջի-  
կը խելակորույս շարունակեց վազել դեպի  
իրենց ամառանոց՝ ծնողներին կանչելու:

Դեպի գեարը վազող մարդկանց միա-  
ցան նաև ճանապարհին հանդիպողները,  
և գեարի մոտ մի մեծ ամբոխ հավաքվեց:  
Նրանց մեջ լավ լողորդներ գտնվեցին, ով-  
քեր, հորձանքի մեջ սուզվելով, դուրս բերե-  
ցին խեղդված աղջկան: Նա չէր շնչում: Երբ  
աղջկան դուրս բերեցին ջրից, մի քանիսը  
բռնեցին նրան և սկսեցին թափ փայլ, բայց  
ավելի բանիմացները թույլ չտվեցին նրանց  
դա անել, քանի որ այդպես թափահարե-  
լով չէին կենդանացնի: Ջրահեղձ աղջկան  
գեարնին դնելով՝ նրանք մարդ ուղարկեցին  
գյուղ՝ բժշկի հետևից: Բժիշկը վազելով փեղ  
հասավ և սկսեց շփել աղջկա սառած մար-  
մինը, փորձեց արհեստական շնչառություն

տալ նրան, բայց կյանքը չէր վերադառնում սառած մարմին:

Այդ ժամանակ եկավ աղջիկների մայրը՝ սարսափից ու ցավից իրեն կորցրած: Իմանալով, որ ոչինչ չի օգնում, նա աղաչում էր, որ էլի փորձեն ինչ-որ բան անել դստերը վերակենդանացնելու համար: Նրան պատասխանեցին, որ այլևս ոչինչ անել հնարավոր չէ: Այդ ժամանակ նա ընկավ հավեր սառած մարմնի վրա, և աղիողորմ արցունքները թրջեցին դստեր կապտած դեմքը: Նեպո մեռած աղջկան դրեցին սայլի վրա, և մայրը նրան փարավ փուն: Իսկ սպասուհուն այդպես էլ չգտան: Նրա դին գտան միայն որոշ ժամանակ անց, երբ նավակով գետ դուրս եկան և սկսեցին կենսաձողով փնտրել հորձանուփի հատակը փարբեր փեղերում: Դուրս հանելով ջրից արդեն վաղուց անկենդան աղջկան՝ նրան նույնպես դրեցին սայլի վրա, ծածկեցին սավանով և փարան փուն: Երբ խեղդված աղջկա քույրերն ուշքի եկան և մի փոքր հանգստացան, նրանք պատմեցին, թե այդ դժբախտությունն ինչպես էր պատահել:

Մի անսովոր փասպ ու փոթ էր այդ օրը: Դեպի գետը գնալիս նրանք շոգից ու ժասպառ էին եղել և երբ ափ էին հասել, սպասուհին մի ակնթարթում հանվել էր և, չսպասելով երեխաների հանվելուն, առանց մտածելու նետվել էր ուղիղ հորձանուրի մեջ: Այդ պահին սպասուհին ջղաձգվել էր, թե մի ուրիշ բան էր պատահել, ոչ ոք չգիտի, և նա սկսել էր խեղդվել: Այդ փեսնելով՝ ավագ քույրը՝ Վերան, առանց բռայե կորցնելու, հագուստն անգամ չհանելով, նետվել էր դեպի խեղդվողը: Բայց Վերան համարյա լողալ չգիտեր և չհաղթահարելով հորձանքը՝ ինքն էլ էր սկսել խեղդվել: Այդ ժամանակ երկրորդ քույրը նույնպես մտել էր ջուրը, հասել հորձանքի դեմ պայքարող քրոջը և ձեռքը մեկնել նրան: Խեղդվողը բռնել էր քրոջ ձեռքը, բայց անմիջապես ետ էր հրել նրա ձեռքն իրենից:

Այդ ժամանակ ջուրը հասել էր երկրորդ քրոջ բերանին, և նա սարսափահար դուրս էր թռել ջրից:

Մինչ երկրորդ քույրը ջրում էր, իննամյա կրտսեր քույրն էր նրա հետևից ջուրը մտել,

բայց տեսնելով, որ միջնեկ քույրը դուրս է գալիս ջրից, ինքն էլ էր վերադարձել ակի: Ահա այդ ժամանակ էր, որ երկու քույրերը վազել էին օգնություն կանչելու:

Երկու աղջիկներն էլ միաբերան պատմում էին, որ իրենց քույրը խեղդվել էր մեռնող մարդուն փրկելիս, և որ նա մի բռպե անգամ չէր փափանվել, այլ անմիջապես ջուրն էր նետվել՝ չմտածելով իր կյանքի մասին. այդ պահին նա լցված էր եղել միայն ուրիշի դժբախտության հանդեպ կարեկցանքով:

Ահա թե ինչպես մահացավ փոքրիկ քրիստոնյա աղջիկը... Մենք հարցուփորձ արեցինք նրա մասին և իմացանք, որ նրա կյանքը նույնքան քրիստոնեական էր, որքան և մահը: Նա մեծ հավատք ուներ և շատ բարի աղջիկ էր: Վաղ մանկությունից ձգտել էր դեպի լուսավորն ու լավը, ինչպես խոտի ծիլն է ամբողջ ուժով ձգվում դեպի արևի լույսը՝ այն կլանելով իր մեջ և դրանից դառնալով ավելի կանաչ և ավելի բարձր: Նա միշտ բնքուշ էր և ուրախ, և նրա կողքին բոլորն իրենց ուրախ ու լավ էին զգում.

աղջկա մեծ կապույտ աչքերում այնքան անկեղծ սեր էր փայլում. այնքան սեր կար բոլորի հանդեպ: Այդպես էլ մեծացել էր: Շատերն են մանկական փարիքում բարի և ամաչկոտ լինում, բայց, հասունանալով, դառնում են ավելի չոր ու կոպիտ. իսկ Վերայի սրտում փարիների հետ սերը դարձել էր ավելի խորը և ավելի ուժեղ: Վերան նաև շատ էր կարդում և մտորում, որի շնորհիվ ավելի ու ավելի խելացի էր դառնում:

Երբ նրա ներկայությամբ Ավերարանից ինչ-որ հատված էին կարդում, նրան թվում էր, թե իր հետ խոսում է հարազատ, մտերիմ մեկը, ում գեղեցիկ խոսքերից աչքերին արցունք էր հայտնվում, և նրա փոքրիկ սիրտը լցվում էր անասելի ջերմությամբ:

Վերային թվում էր, որ այդ գիրքը ամենաանհրաժեշտն է իր համար և ինքը պետք է ինքնուրույն կարդա և վերընթերցի այն: Այդ իսկ պատճառով Վերան խնդրել էր մայրիկին, որ իրեն Ավերարան նվիրի: Վերան այն ժամանակ ընդամենը փասնմեկ փարեկան էր, և մայրը երկար ժամանակ չէր համաձայնվում կատարել նրա

խնդրանքը, ասելով, որ այդ գիրքը կարդալու համար նա դեռ փոքր է, որ իր մանկական խելքով չի հասկանա: Բայց աղջիկը համատորեն խնդրում էր, և մայրը, ի վերջո, նրան Ավետարան նվիրեց: Երանավետ ուրախությամբ Ավետարանն ընթերցելով և վերընթեռնելով՝ աղջիկն այդ գրքից չէր բաժանվում: Նա բոլոր չորս Ավետարաններն անգիր գիտեր: Բայց զարմանալին դա չէր. Ավետարանն անգիր սովորել կարող է ամեն ոք: Զարմանալին այն էր, թե նա որքան լավ էր հասկանում այն, ինչ սովորեցնում էր Ավետարանը:

Ամենից առաջ նա Ավետարանից հասկացել էր, որ չի կարելի ապրել միայն իր համար, այլ պետք է ապրել նաև բոլորի համար, սիրել բոլորին, բոլորի հետ լինել հեզ և քնքուշ, ծառայել բոլորին, իսկ ամենից առավել պետք է կարեկցել և օգնել մանավանդ նրանց, ովքեր կարեկցողներ չունեն՝ բոլոր կարիքավոր, քաղցած և անպուն մարդկանց:

Նա նույնքան շուտ էլ հասկացել էր, որ միշտ պետք է արդարամիտ լինել, որ պետք



Է ամենուր և միշտ փնտրել միայն ճշմար-  
պությունը և միշտ ճշմարպությունն ասել՝  
չվախենալով ոչնչից, եթե անգամ նեղաց-  
նեն, վիրավորեն կամ պարտեն այդ ճշմար-  
պության համար: Պետք է միշտ մաքուր  
սիրտ ունենալ, ինչպես փոքրիկ երեխանե-  
րը, որոնց մեջ որևէ չար բան չկա և, ինչպես  
երեխաների ներկայությունից են բոլորն ու-  
րախանում, այդպես էլ ինքդ պիտի ձգտես  
այդպիսին լինել, որպեսզի քեզ շրջապա-  
րողներին ուրախացնես և մխիթարես, ինչ-  
պես արևն է երկնքում բոլորին ուրախաց-  
նում՝ և՛ բարիներին, և՛ չարերին. ոչ մեկին չի  
առանձնացնում, բոլորին լուսավորում է և  
բոլորին փաբացնում:

Այս ամենը նա հենց սկզբից հասկացավ  
Ավետարանից, իսկ փարիսեյ հեյոռ նրան  
շատ ուրիշ բաներ ևս պարզ դարձան: Այս  
երեխան շատ լավ էր հասկացել, թե ինչի  
համար է ապրում, ինչին պետք է հավատա  
և ում սիրի ամբողջ հոգով. պետք է ապրել  
ճշմարպության համար. հավատալ Աստ-  
ծուն, իսկ Աստված սեր է, ինչպես և ասված  
է Ավետարանում. ամբողջ սրտով պետք է

սիրելի մարդկանց՝ իբրև սիրելի և թանկագին եղբայրների և բույրերի:

Վերայի հոգին վստահությամբ ձգվում էր դեպի սիրո այդ ուսմունքը՝ Քրիստոսի ճշմարտությունը: Նա հավատում էր, որ բոլորը պարտավոր են և կարող են ապրել այնպես, ինչպես մարդկանց սովորեցնում է ապրել Աստուծու Որդին՝ մեր Տեր Տիսուս Քրիստոս: Եվ երբ այդ մասին ասում էր մեծերին, և ոմանք էլ մեծահոգաբար ժպտալով ասում էին, թե անհնար է այդպես ապրել, նա պարասխանում էր. «Ուրեմն դուք չէք հավատում Քրիստոսի խոսքին: Ո՛չ, եթե հավատում ես, ուրեմն հավատում ես»: Եվ նա դա ասում էր այնպիսի ջերմ համոզվածությամբ, որ հասուն մարդիկ ակամայից լռում էին, իսկ նա միշտ ինչ-որ առանձնահատուկ արտահայտչականությամբ էր կրկնում. «Եթե հավատում ես, ապա հավատում ես»:

Նա ազատ ժամանակ շատ էր կարդում: Ամենից շատ սիրում էր կարդալ Տիսուս Քրիստոսի կյանքի և վարդապետության մասին: Նա կապույտ շատ էր սիրում կար-

դալ պատմական և ճանապարհորդությունների մասին գրքեր: Մարդկանց կյանքի մասին կարդացած պատմությունները գնահատում էր յուրովի. այն ժողովուրդները, որոնք ապրում էին միմյանց հետ համերաշխ, հանգիստ, խաղաղ, բարեկամաբար, ապրում էին այնպես, ինչպես միշտ է պետք ապրել: Իսկ երբ պատերազմների, արյունահեղությունների, և ընդհանրապես, մարդկանց՝ ուրիշների նկատմամբ դաժանությունների և բռնությունների մասին էր կարդում, միշտ վրդովմունքով դատապարտում էր այդպիսի արարքները: Առանց ամաչելու որևէ մեկից դատապարտում էր ամեն մի անարդարություն, որը տեսել էր, լսել կամ կարդացել էր: Այդ պահերին նրա դեմքը միշտ կարմրում էր՝ կարծես ամաչում էր մարդկանց փոխարեն, և դողդոջուն ձայնի մեջ արցունքներն էին զրնգում:

Որքան սիրում էր նա բոլորին, նույնքան էլ ամբողջ սրտով ապրում էր չարությունը և սուտը՝ ում մեջ էլ նկատեր: Նա այդ ամենը ներում էր, բայց գտնում էր, որ մեծ մեղք է ճշմարտությունը թաքցնել նրանցից, ով-

քեր չարն են գործում: Նա երբեք չէր սպում: Ինչպես հավատում էր և խոսում, այնպես էլ սպարում էր՝ բարիք գործելով:

Նրա ծնողները համեստ միջոցների փեր մարդիկ էին: Երբեմն իրենց դուստրերին նվիրում էին 15-20 կոպեկ, և երբեմն Վերան մեկ ռուբլի էր հավաքում, բայց երբեք իր համար ոչինչ չէր գնում: Իսկ ի՞նչ էր անում իր հավաքած փոքրիկ գումարը: Երբ հյուր էին գալիս ծանոթներ՝ աղքատ և ծայրահեղ կարիքավոր մարդիկ, աղջիկն աննկատ դրամ էր դնում միջանցքում կախված նրանց հագուստի գրպանում, իսկ երբ պատահում էր ինքն էր այդ մարդկանց փուն գնում, դրամն աննկատ դնում էր բարձի փակ:

Իսկ երբ դա հայրնի էր դառնում, և նրան հարցնում էին, թե ի՞նքն է արել, կարմրում էր և, ոչինչ չպատասխանելով, հեռանում: Նարագափները, փեսանելով, թե որքան ծանր էր փանում, երբ բացահայտվում էր նրա հոգու գաղտնիքը, դադարեցին նման հարցեր փալ՝ ցույց չբալով, որ նկատեցին արածը:

Չոհաբերելով այն քիչը, որ ուներ՝ Վերան զոհաբերեց նաև իր կյանքը, երբ դա անհ-

րաժեշտ էր: Եվ իր կյանքի վերջին րոպեներին արեց այն, ինչ կարող էր անել սիրով լցված մարդը: Տիշն՛ք, որ երբ բույրերից երկրորդը, ջրում մինչև հորձանույրը հասնելով, ձեռքը մեկնեց հորձանքի դեմ պայքարող քրոջը, խեղդվողը բռնեց այդ ձեռքը, իսկ հետո նույն վայրկյանին բաց թողեց: Նա դա արեց գիտակցաբար, որովհետև հանգուցյալ աղջիկը քանիցս ասում էր. «Երբ մարդը խեղդվում է, պետք է խեղդվողին բռնել թույլ չտալով, որ նա բռնվի փրկողից, այլապես փրկողը նույնպես կգոհվի»: Նա այդ մասին կարդացել էր ինչ-որ գրքում: Այդ պատճառով կարելի է ենթադրել, որ նա հիշել էր այդ բառերը քրոջ ձեռքը բռնելու պահին և, որպեսզի քրոջը չկործանի, ձեռքը բաց էր թողել, իսկ ինքը հավիտյան խորասուզվել էր գետի խորքերում:

Ահա թե ինչու գետում փրկի ունեցած դժբախտության օրը երեկոյան ամառանոցի սենյակներից մեկում, որտեղ ապրում էր հանգուցյալ աղջկա ընտանիքը, լսվեց հոգեհանգստյան փխուր երգասացությունը, ինչ-որ առանձնահատուկ, հուզիչ բան կար

հավաքված հարազատների և ծանոթների սրբերում: Ջերմեռանդորեն աղոթող մոր և բույրերի՝ արցունքով լցված աչքերն անսահման սիրով և ցավով նայում էին այնպեղ, որպեղ պատկած էր առանց վարանելու իր կյանքը սուրբ սիրուն գոհաբերած փասնջորսամյա աղջկա՝ գրեթե մանկական մարմինը: Բուրվառի խաղաղ ծիսի մեջ աղջկա սպիտակ, գեղեցիկ դեմքին սատել էր հեզ և բարի ժպիտը, որով կարծես բոլոր հավաքվածներին ասում էր. «Ես արեցի իմ գործը, իսկ դուք արեք ձերը»:

*Ըստ Գորբունով-Պոսադովի*

## ԿԱՆԱՐԴԱԿԱՆ ԱԿՆՈՅԸ

- Ափսո՛ս, հիմա կախարդուհիներ չկան: Նրանք կկատարեին մեր ցանկությունները, - ասաց փոքրիկ Սաշան, զննելով իր մայրիկի գրպանի հեռադիպակը, որը նա նվեր էր ստացել իր ծննդյան օրը: - Ես կիմանայի՛ ինչ խնդրել նրանցից:

- Ճիշտ է, ճիշտ այդպիսի դիպակ, ինչպիսին իմն է, - ժպտալով նկատեց մայրը:

- Ո՛չ այդպիսին: Ես կցանկանայի այդ ապակիներով փեսնել ոչ միայն դեմքեր և առարկաներ, ես դրանք առանց այդ էլ լավ եմ փեսնում, այլ կցանկանայի փեսնել այն ամենը, ինչ թաքնված է նրանց հետևում, օրինակ՝ մարդկանց սրտերը, իմանալ նրանց մտքերը, ցանկությունները, ինչպես նաև՝ ով է նրանցից բարի, ով՝ չար:

- Ես շատ ուրախ եմ, - ասաց մայրիկը,

- որ դու այդպիսի ապակիներ չունես, այլապես շապ թշնամիներ ձեռք կբերեիր:

- Ինչո՞ւ, մայրի՛կ, - հարցրեց աղջիկը:

- Միրելի՛ս, մի՞թե դու կարծում ես, թե մարդկանց հաճելի՞ կլիներ իմանալ, որ ոչինչ նրանք չեն կարող թաքցնել, և որ նրանց սրտերը բաց են քո առջև: Բացի դրանից, դու ինքդ դժբախտ կլինեիր՝ լավի փոխարեն ավելի շապ վապրը փեսանելով: Սպասի՛ր, ես մի հեքիաթ հիշեցի: Այն քեզ կբացատրի՝ ինչը չես հասկանում:

Վաղուց, շապ վաղուց աշխարհում մի մարդ էր ապրում: Նա այնպիսի ապակիներով ակնոց էր ցանկանում ունենալ, ինչպիսին դու ես ուզում, և ստացավ այն: Միայն թե, հենց ակնոցն աչքերին դրեց, այլևս չկարողացավ հանել այն: Ի՞նչ էր պատահել...

Նրա առջև բացվեցին մարդկանց սրտերը՝ ամեն փեսակ մտածումներով, բայց նա ավելի շապ փեսանում էր վապրը, քան լավը: Նա այդ ապակիներով թափանցում էր իր ամենասիրելի և ամենափորձված ընկերների սրտերը և ամենուր թերություններ էր գտնում: Դա մեծ փխրություն պատճա-



ռեց նրան, և նա սկսեց ընկերներին սատր և կասկածամտությամբ վերաբերվել: Նրանք սկզբում զարմացան, քիսրեցին՝ չիմանալով ինչին վերագրել այդպիսի փոփոխությունը, և, ի վերջո, մենակ թողեցին նրան: Միայնակությունը ճնշում էր խեղճին, բայց նա չէր ցանկանում ուրիշ աչքերով նայել այն մարդկանց, ովքեր իրենից ավելի վապն էին թվում, և իր քիսրության մեջ սկսեց Աստուծոց իր համար մահ խնդրել: Մահվան փոխարեն նրան հայտնվեց հրեշտակը՝ բարի դեմքով և երկնագույն աչքերով: «Ես սերն եմ, - ասաց անձանոթ բանբերը, - ես եկա քեզ օգնելու և ցրելու քո մոլորությունը: Դու ուրիշների մեջ կապարելություն ես փնտրում: Բայց կարո՞ղ է կապարելություն գտնել մի անձ, ով հենց ինքն է թերություններով լի: Սկզբում քո՝ սիրտը քննիր և հեպո միայն, եթե հանդգնես, դաբապարտիր մերձավորներիդ»: Այդ խոսքերն ասելիս հրեշտակը դիպավ հրաշք ակնոցին, և այդ մարդու առաջ բացվեց իր իսկ սեփական սիրտը, որն իր մերձավորների սրտերից ավելի վապն էր... «Տե՛ր Աստված, ինչ մեղավոր

մարդ եմ: Ների՛ր ինձ», - բացականչեց նա, և ակնոցն ընկավ նրա ոտքերի մոտ: «Մի-րի՛ր մերձավորիդ՝ ինչպես ինքդ քեզ, - ասաց հրեշտակը, - այդ է Աստուծու պատվիրանը: Փորձի՛ր ներել ուրիշներին, նրանց թերութ-յունները և դու երջանիկ կլինես երկրի վրա և ներված՝ այն աշխարհում»: Մարդը կա-տարեց հրեշտակի կարգադրությունը, և ամբողջ աշխարհը, մարդիկ նրան ավելի լավը և բարի թվացին, որովհետև նա հի-շում էր այն, ինչ Կեսել էր իր սրտում, և հի-մա նայելով ուրիշներին՝ ջանում էր նրանց մեջ գտնել միայն լավ կողմերը, և դրա շնոր-հիվ ինքն է՛լ ավելի լավը և ավելի երջանիկ էր դառնում:

- Նասկացա՛ր իմ հեքիաթը, Մա՛շա, - հարցրեց մայրիկը: - Ուրեմն մենք էլ նայենք ինքներս մեզ այդ կախարդական ակնոցով, իսկ ուրիշներին՝ հասարակ ապակիներով: Մեզ պատվիրված է սիրել մերձավորներին, այլ ոչ թե փնտրել նրանց թերությունները: Մեր սեփական թերությունները ճանաչելը և ուղղելն էլ բավական է:

## ԱՆՄՈՌՈՒԿԸ

(լեզուն)

**Ե**ս ձեզ հետ ուզում եմ խոսել փոքրիկ երկնագույն, մեջպեղում սրտիկ հիշեցնող ոսկեգույն պսակով ծաղիկի մասին: Այդ ծաղիկ անունը անմոռուկ է:

Երբ ես դեռ փոքր երեխա էի, մեր գյուղի փան լայնարձակ զբոսայգում դայակիս հետ զբոսնելիս միշտ երկար կանգ էի առնում զբոսայգին անփառի մութ թավուրից բաժանող մեծ առվակի մոտ: Այդ առվի եզերքին աճում էին խոշոր, գեղեցիկ բազում անմոռուկներ: Աչքս չէի կարողանում կտրել դրանցից, ինձ թվում էր, որ անմոռուկներն ինձ են նայում իրենց երկնագույն հայացքով և ասում. «Մի՛ մոռացիր ինձ»: Երբեմն հարցնում էի դայակիս. «Այդ ծաղիկները խոսո՞ւմ են»:

Դայակս անչափ բարի, պարզ սրտով և խորը հավաքքով փափիկ էր: Նա սիրում

Էր լսել Սուրբ Գիրքը և գիտեր հոգևոր բովանդակությանը բազմաթիվ հեղափոխություններ: Մի անգամ, երբ կրկնում էի հարցնա՝ խոսո՞ւմ են այդ ծաղիկները, թե՛ ոչ, նա ինձ պատասխանեց. «Այո՛, բարեպաշտ մարդիկ պարմում են, որ ծաղիկները մի անգամ խոսել են, և ամենալավ խոսքերն ասել է քո սիրած երկնագույն ծաղիկը»: «Պարմի՛ր, փարի՛կ, ի՞նչ է նշանակում անմոռուկ»: «Պարմեմ, սիրելի՛ս, - պատասխանեց ինձ ջերմորեն սիրող դայակս, - հանգիստ նստի՛ր և համբերությամբ լսի՛ր»:

Ես հնազանդվելով նստեցի դայակիս կողքին՝ փափուկ խոտի վրա՝ առվակի ափին և աչքս չկտրելով մեզ շրջապատող անմոռուկներից՝ լսեցի հեղևյալ պարմությունը:

«Երբ Տեր Աստված, - խաչակնքվելով սկսեց դայակս, - աշխարհն արարելուց հետո հանգստացավ իր գործերից, կանչեց առաջին մարդուն՝ Ադամին, և նրա առջև դրեց բոլոր բույսերը և ամեն ծառի, ծաղկի, խոտի անուն էր փայլիս և ասում, թե յուրաքանչյուրն ինչի համար է ստեղծված: Միայն

մի ծաղիկ էր կանգնած անխոս և շար հուզված. նա իր երկնագույն աչուկներով հզոր Արարչին նայելով և Նրա առաջ իր ոսկյա սրտիկը բացելով, երանավեպ հիացմունքից մոռացավ ամեն ինչ՝ Արարչից բացի: Մինչև գեպին խոնարհելով իր ծաղիկները և կոկոնները՝ երկնագույն ծաղիկը շփոթմունքից շառագունեց և աղերսական ձայնով թոթովեց. «Տե՛ր Աստված, Նա՛յր բոլոր արարածների, ների՛ր ինձ, ես չկարողացա հայացքս կտրել Քեզանից և մոռացա ինքս ինձ: Եթե կամենաս կրկնել իմ անունը, ես այն երբեք չեմ մոռանա»: Երկնքի և երկրի Արարիչը, գորովանքով նայեց այդ ծաղիկին ու ասաց. «Դու մեղավոր չես, որ մոռացար ինքդ քեզ. միայն թե Ինձ չմոռանաս», - և հեռացավ: Ծաղիկն այդպես էլ մնաց աստվածային հիացմունքի երանավեպ վիճակում և դարձավ ինչպես քո, այնպես էլ բոլորի սիրելին, - ասաց ինձ դայակս, - Տերն իր հանդեպ սիրո համար նրան պարզեց Անմոռուկ գեղեցիկ անունը: Դու էլ մանկական սրտումդ դիր անմոռուկին փրված Տիրոջ պատվիրանը. «Միայն թե Ինձ չմոռանաս»:

## ՄԵԾԱՀՈԳԻ ԱՂԶԻԿԸ

(իրական պարամոթյուն)

**Մ**ի երկրում սովորույթ կար՝ կարելու բոլոր նրանց ձեռքերը, ում կրոնեին գողության մեջ: Մի անգամ գողության մեջ բռնվեց մի նշանավոր մեծապոռնիկ՝ թագավորի սիրելին: Թագավորը չէր կարող հրաժարվել հին սովորույթից և հրամայեց պարժել հանցագործին: Բայց ահա, պարժի նախօրեին պալատ է գալիս մի փոքրիկ աղջիկ՝ այդ մեծապոռնիկի դուստրը, և արտասվալից խնդրում, որ իրեն թողնեն թագավորի մոտ գնալ: Պալատականները կարարեցին նրա խնդրանքը: Աղջիկը ծնկի իջավ ահեղ փիրակալի առջև: «Մե՞ծ թագավոր, - ասաց նա՝ ահր սրտում, - իմ հայրը դարապարված է առանց ձեռքերի մնալու: Դե ուրեմն, ի՞նչ ձեռքերը կարեք»:

Թագավորն իր գավակներն ուներ և նրան դուր եկավ, որ փոքրիկ աղջիկն այդքան սիրում էր հորը: «Թող լինի այնպես, ինչպես դու ես խնդրում, - ասաց թագավորը: - Բայց դու անգամ վերջին րոպեին կարող ես հրաժարվել պարտից»: Նաջորդ օրը աղջկան փարան պարիժների բակը: Բակի կենտրոնում գտնվում էր արյունոտ կառափնակոճղը, իսկ կողքին դահիճը՝ սուրը ձեռքին: Աղջիկը գունապվեց, մի պահ շփոթվեց, բայց... շուտով իրեն փրկապետեց, մոտեցավ կառափնակոճղին և մեկնեց իր փոքրիկ ձեռքերը: Դահիճը պարաններով ամուր կապեց նրա ձեռքերը կառափնակոճղին: Աղջիկը ոչ մի բառ չասաց: Նա բարձրացրեց սուրը, իսկ աղջիկը փակեց աչքերը... Սուրը փայլապակեց և իջավ՝ նույնիսկ մարմնների ծայրերին չդիպչելով:

«Թագավորը ներում է քո հորը՝ նրա հանդեպ քո մեծ սիրո համար», - հայտարարեց թագավորի ուղարկած մունտփիկը: Բացվեցին բանարի դռները. դեպի աղջիկը վազեց նրա հայրը. նա համբուրում և արցունքներով թրջում էր դստեր ձեռքերը: Նաջորդ

օրը թագավորը դաժան սովորույթը հավելք վերացնելու մասին հրաման արձակեց: Իսկ պապիժների բակում թագավորի հրամանով կանգնեցրին մարմարե ցուցանակով մի սյուն և նրա վրա ոսկե փառերով գրեցին, թե ինչպես դուստրը պապրասպ էր իր կյանքը փալ հոր համար, և վերջում ավելացրին այս խոսքերը. «Երջանիկ են այն հայրերը, ովքեր այդպիսի երեխաներ ունեն»:



## ԵՐԵՔ ՓՈՔՐԻԿ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՂԶԻԿՆԵՐԸ

**Ս**ուրբ նահապարակ Սոֆյան, նրա երեք դուստրերը՝ Նույսը, Նավապը և Սերը, նահապարակվեցին Նոնում II դարում՝ Ադրիանոսի թագավորության օրոք: 137 թվականին՝ քրիստոնյաների հալածանքների ժամանակ, բռնությամբ դապարան բերվեցին Սոֆյան՝ բարեպաշտ մի այրի, և նրա դուստրերը՝ Նույսը, Նավապը և Սերը, որոնցից ավագը փասներկու փարեկան էր, իսկ կրտսերը՝ ինը:

«Տե՛ր Աստված, մի՛ լքիր մեզ, այլ օգնի՛ր՝ չվախենալու փանջանքներից, մահվանից: Օգնի՛ր մեզ, Փրկի՛՛ջ, չհրաժարվել Քեզանից»: Այս էր աղոթքով աղաչում քրիստոնյա մայրը, և դուստրերը հեպևում էին նրա օրինակին: Սոֆյան արդեն հասց-

րել էր նրանց մեջ հասարակել Քրիստոսի հավատարբը: Աղոթքը վերջացնելուց հետո նրանք հանդարտված գնացին դատարան՝ իրենց հանձնելով Նրա կամքին, Ով պարվիրել էր չվախենալ նրանցից, ովքեր մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող...

Դատարանում այն հարցին, թե որպեղից է նա և ինչ հավատք ունի, Սոֆյան համարձակ պատասխանում էր, որ ինքը Քրիստոսի աղախինն է, Ում անճառելի անվանը պետք է երկրպագեն երկրի վրա Նրա սրբեղծած բոլոր արարածները: «Եվ իմ երեխաներին էլ, - ավելացրեց Սոֆյան, - հանձնել եմ Քրիստոս Աստծուն, որպեսզի նրանք պահպանեն անմահ Փեսայի՝ Աստծո Որդու սերը...»:

Դատից հետո Սոֆյային իր երեխաների հետ փարան Պալատիա անունով մի հեթանոս կնոջ մոտ, որը պետք է համոզեր նրան, որ հանուն խաչված Քրիստոսի հավատի, չգոհաբերի իր զավակներին և նրանց երջանկությունը: Բայց մինչև նոր

դասը Սոֆյան իրենց արված բոլոր երեք օրերն անցկացրեց աղոթելով և երեխաներին հորդորեց, որ պատրաստ լինեն նահապակության սխրանքին: «Սիրելի՛ փոքրիկներս, - ասում էր Սոֆյան իր դուստրերին - ահա՛ հասավ ձեր սխրանքի ժամը՝ հանուն Նիսուս Բրիսպոսի: Մի՛ վախեցեք Նրա համար նահապակվելուց: Մի՛ վախեցեք գրկվել ժամանակավոր կյանքից՝ հանուն Նրա թագավորության մեջ հավիպենական կյանքի: Մի՛ վախեցեք, որ ձեր մարմինները պիտի չարչարեն. Աստված կրուժի ձեր վերքերը և հավերժական գեղեցկություն կպարզի ձեզ ... Չգայթակղվե՛ք, եթե ձեզ խոստանան ճոխ նվերներ և ամեն քետակ երկրային պատիվներ... Այդ ամենը կանհետանա՝ ինչպես ծուխը, ինչպես փոշին. քամին կքշի, ու կթռչնի ամեն ինչ՝ ինչպես խոտը: Նավիպենական են միայն Աստծո շնորհները: Ոչ մի չար բանից մի՛ վախեցեք, Աստված չի լքի ձեզ, Նա իրեն հավաքացողներին խոստացել է, որ ավելի շուտ մայրը կնոռանա իր երեխային, քան Նա՝ Իր ժո-

ղովրդին... Զավակներս, հիշե՛ք, որ ես ձեզ ծնել եմ ցավերի մեջ, դժվարություններով եմ ձեզ դաստիարակել, հիշե՛ք Աստուծո սերը և Աստուծո երկյուղը, ինչպես ես եմ սովորեցրել, հարգե՛ք իմ ծերությունը՝ հասարակական դավանելով Քրիստոս Աստուծուն...»:

Եվ աղջիկների մանկական սրբերը խորապես ընդունեցին իրենց քրիստոնյա մոր խրատները, և անսպասելիորեն ծաղկեցին երկնային սերմերի երկնային պտուղները, որ սերմանել էր մայրն իր երեխաների հոգիներում:

Երբ նորից դաստիարակեցին, նրանք անվախ խոստովանեցին իրենց հավատն առ Քրիստոս, իրենց հավատը չուրացան՝ չնայած խոստացված երկրային ամենաբազմազան ուրախությունների, չուրացան անգամ դաժան պատիժների ժամանակ. մեկը մյուսի հետևից՝ ավագը՝ Նավապը, երկրորդը՝ Նույսը, և կրտսերը՝ Սերը, դիմացան և՛ շիկացրած ցանցի վրա այրվելուն, և՛ եռացող կուպրի մեջ վառվելուն, և՛ սուր երկաթով խարանվելուն, անիվին մեխվելուն,

և՛ գանահարմանը այնպես, որ կտրանքի ենթարկված մարմինները կտոր-կտոր եղան...

Եվ հանուն Տիրոջ փառքի կենդանի մնացին, չնայած այդ բոլոր խոշտանգումներին, և հեպո թրապվեցին: Սոֆյան նույնպես դիմացավ չարչարանքներից դաժանագույնին՝ իր երեխաների փանջանքների փեսառանին և մահապարտին: Իսկ Տերը շուրջով լիովին մխիթարեց Իր համար գոհված Սոֆյային՝ եթե ոչ մարմնով, ապա սրբով: Թաղելով իր երեխաներին՝ նա անդադրում աղոթքով նրանց գերեզմաններից չէր հեռանում, իսկ նրանց մահվան երրորդ օրը ինքն էլ ննջեց հավերժական քնով՝ Աստծու թագավորության մեջ միանալով իր երեխաներին այն սիրով, որով ինքն էր սիրում Քրիստոս Աստծուն և երեխաներին էլ սովորեցրել էր սիրել Նրան:

## ԹԱՆԿԱՐԺԵՔ ԿՈՊԵԿԸ

(տրամանակրորդի պատմությունը)

**Մ**ի անգամ պահակի ուղեկցությամբ աշխատանքից տուն էի վերադառնում, երբ իմ առջևով անցավ մի կին իր դստեր հետ: Դուստրը ինը տարեկան էր: Ես նրանց արդեն մի անգամ տեսել էի: Մայրը գինվորի այրի էր: Ամուսինը դատապարտվածներից էր և մահացել էր հիվանդանոցում՝ դատապարտյալների հիվանդասենյակում: Այդ ժամանակ ես էլ էի պառկած նույն հիվանդանոցում: Կինը և աղջիկը հիվանդանոց էին եկել՝ հրաժեշտ տալու հանգուցյալին. երկուսն էլ լալիս էին:

Աղջիկն ինձ տեսնելով՝ կարմրեց և մոր ականջին ինչ-որ բան շշնջաց: Մայրն անմիջապես կանգ առավ, կապոցում ինչ-

որ բան փնտրեց և գտնելով տվեց աղջկան:  
Աղջիկը վազեց իմ հետևից: Նա իմ ձեռ-  
քը խցկեց մի կոպեկ և ասաց. «Վերցրո՛ւ,  
դժբախտ մարդ, ի սեր Զրիստոսի՝ վերցրո՛ւ  
կոպեկը»: Ես վերցրեցի կոպեկը, և աղջիկը  
լիովին գոհացած վերադարձավ մոր մոտ:

Այդ կոպեկը ես հիմա էլ պահում եմ ինձ  
մոտ:

*Ֆ. Մ. Դոստոևսկի*

## ԴՈՒՔ ԵՎՍ ՕԳՆԵՔ, ԵՐԵՆԱՆՆԵՐ

Լսեք, թե ինչպես էին վարվում բարի քրիստոնյա երեխաները, երբ լսում էին, թե պետք է օգնել հեթանոսներին, որպեսզի նրանք ևս դառնան առ Քրիստոս:

Մի փոքրիկ աղջիկ կույր էր: Նա շատ աղքատ էր և իր հանապազօրյա հացը միայն գուլպա գործելով էր հայթայթում: Բայց անգամ իր թշվառության մեջ նա չէր մոռանում անհավասարներին, որոնց մասին երբեմն-երբեմն լսում էր: Մի անգամ նա եկավ անհավասարների շրջանում քարոզության համար դրամ հավաքող մի մարդու մոտ և մի ոսկեդրամ փվեց: «Ինչպե՞ս ես այսքան դրամ հավաքել», - հարցրեց մարդը: Կույրը պատասխանեց. «Ես նույնքան դրամ եմ վաստակում գուլպա գործելով, որքան



ընկերուհիներս, բայց ես լույսի փակ չեմ գործում, որովհետև կույր եմ և լույսի կարիք չունեմ: Ահա, բերել եմ այնքան գումար, որքան ինձ պետք կգար ձմռան նավթի համար»: Այսպես կույր աղջիկը, չնայած իր չքավորությանը և խեղճությանը, հոգում էր այն անհավասարների մասին, ովքեր Քրիստոսին չէին ճանաչում: Նա իր մարմնավոր կույր աչքերով մտածում էր, թե ինչով օգնել անհավասարին Քրիստոսի ուսմունքի լույսով լուսավորելու գործին:

Պատմում էին նաև մի հուզիչ դեպք հիվանդ աղջկա մասին: Անկողնում պառկած՝ նա մի արկղիկ էր խնդրել հորից և ամեն շաբաթ հոր փված դրամները պահում էր այնպեղ. այդ դրամները նա հավաքում էր՝ անհավասարների շրջանում քրիստոնեություն քարոզելու գործին նվիրելու նպատակով: Նրա մահից հետո, երբ հոր ներկայությամբ բացեցին արկղը, այնպեղ ավելի շատ դրամ գտնվեց, քան ստացել էր դուստրը հորից: Շուրջով ամեն ինչ պարզվեց. մի բարերար կին խոստացել էր մեռնող աղջ-

կան նարինջ ուղարկել: Բայց հիվանդը խնդրել էր նարնջի փոխարեն արկղի մեջ գումար գցել՝ քրիստոնեության քարոզության համար: Տայրը, այդ լսելով, գոհություն էր հայտնում Աստծուն՝ արցունքն աչքերին: Ահա թե ինչպես էին բարի երեխաները մասնակցում հեթանոսների մեջ Աստծո խոսքը փարածելու գործին: Խղճացելք նրանց նաև դուք, սիրելի՛ երեխաներ: Ձեր մանկական սրտերը կհուշեն ձեզ, թե ինչով և ինչպես օգնեք այն մարդկանց, ովքեր դեռևս չեն ճանաչել Աստծուն: Նրանց պետք է և՛ ձեր փոքրիկ ներդրումը, և՛ ձեր մանկական աղոթքը, և՛ ձեր կարեկցանքը, և՛ ձեր սերը նրանց նկատմամբ:

## ՆԱՀԱՏԱԿ ԱՂՋԻԿԸ

Հին ժամանակներում կռապաշտ-հեթանոսները փանջանքների և մահապարժի էին ենթարկում քրիստոնյաներին: Մարտիրոսվածների մեջ երբեմն լինում էին նույնիսկ փոքրիկ աղջիկներ: Ահա քրիստոնյաներին հալածելու մի պարամոթյուն, որը կարարվել է Մարկոս Ավրելիոս կայսեր ժամանակներում՝ այսօրվա Ֆրանսիայի Լիոն գավառում: Քրիստոնյաների հալածանքներն սկսվեցին սկզբում նրանց հայհոյելով և քարկոծելով, հետո սկսեցին կոդապել նրանց փները, քրիստոնյաներին բռնել և փանել դապարան: Այսպեղ նրանց խոշտանգում էին և չարչարում. ոմանց սպիպում էին ուրանալ Քրիստոսին: Ջրպարտելով քրիստոնյաներին՝ ոմանց սպիպում էին

հասարակել ժողովրդի կարծիքը՝ քրիստոնյաների գազրելի հանցագործություններ կատարած լինելու մասին: Կրթականներն այնքան երկար էին տևում, որ փանջողները հոգնում էին, իսկ քրիստոնյաները շարունակում էին հավատարիմ մնալ Քրիստոսին և ճշմարտությանը: Ստրկուհիներից Բլանդինա անունով մի աղջիկ բոլոր հարցերին պատասխանում էր միևնույն խոսքերով. «Ես քրիստոնյա եմ, մենք ոչ մի վարքան չենք անում»: Նրան ենթարկում էին ամենասարսափելի կրթականների, բայց նա, հագիվ շունչը փեղը բերելով, նույն էր կրկնում. արյունաքամ վիճակում նույն բաներն էր արտաբերում:

Տասնհինգամյա մի տղա՝ Պոպպիկը, քաջությամբ դիմացավ բոլոր փանջանքներին և իր հավատը չուրացավ. նրա քույրը, կողքին կանգնած, համոզում էր պահպանել իր հավատարմությունը: Գավառի եպիսկոպոսը՝ 90-ից բարձր տարիքի մի ծերունի, այնքան չարչարվեց, որ երկու օր հետո բանփախցում մահացավ: Այսպիսի հասարա-

տրակամությունն այնքան մեծ ազդեցություն էր թողնում ուրիշների վրա, որ նրանք, ովքեր սկզբում երկմարում էին, այժմ առանց վախի դավանում էին Քրիստոսին. ուրացողները կրկին դառնում էին հավատարիկներ և ցանկանում էին ընդունել քանջանքները: Այդ քրիստոնյաներից ոմանց սրի քաշեցին, իսկ մեծ մասին բազմամբոխ հեթանոսների ներկայությամբ կրկեսի հրապարակ ներեցին՝ վայրի գազաններին կերակուր: Այդ պատժին դատապարտվածները զոհվում էին մեծագույն ուրախությամբ: Բլանդինան կանգնած գոբեպնդում էր մյուսներին. նա հրապարակ մտավ ուրախությամբ, Աստուծոն փառաբանելով՝ ասես հարսանեկան հանդեսի էր գնում, ոչ թե քանջալից մահվան: Նրան փաթաթեցին ցանցով և ներեցին վայրի ցուլի առաջ, որը, նրան իր կոպոռներով վեր ներելով՝ սպանեց նրան: Նրա հաստատրակամությունը և համբերությունը տեսնելով՝ հեթանոսներն ասում էին, որ իրենց կանայք այդպիսին չեն, իսկ այս դեպքերը փոխանցող քրիստոնյա

գրողն ասում է. «Այսպես փառավորվեց Աստված նրանց միջոցով, ովքեր աշխարհի աչքին թույլ ու ոչնչություն էին թվում»: Բոլոր նահապարակների մարմիններն այրեցին, իսկ մոխիրը թափեցին գետը՝ կարծես ցանկանալով վերացնել քրիստոնեության հետքերը:

## ՀՌՈՄԵԱԿԱՆ ԿՐԿԵՍՈՒՄ

**Ց**նծում է Նոռնը... Դիմավորում է հաղթական Տիպոսին՝ իր երկաթե լեգեոններով և լեգեոնների ոսկե արծիվներով, որոնք իրենց բարձր փայտածողերի վրա ճախրել էին այն ժամանակվա հայրնի երկրներում: Տիպոսը վերադառնում էր ապստամբած Նուդայի երկրի հանդեպ փարած հաղթանակից հետո:

Տիպոսը, հաղթակառքի վրա կանգնած, «սրբազան ուղիով» մտնում էր հավերժական «Ֆորում ռոմանում»: Նրա մարտակառքի երևից վազում էր ժողովրդական «գրպարպիչը», որը հնուց ի վեր ընդունված սովորությամբ պարսավում էր հաղթողին, իսկ ցնձացող ժողովուրդը, իհարկե, ծիծաղում էր «գրպարպիչի» վրա... Լսվում էին ողջույնի ճիչեր, հիացական բացականչություններ:

Նաղթակառքին հետևում էր մեկ ուրիշը, նրա վրա վեր էր խոյանում արևից շողարձակող հսկայական յոթ թևանի ոսկե աշտանակը, որը հափշտակել էին Սողոմոնի փաճարի սրբարանից, ինչպես նաև փաճարի սրբազան գանձեր՝ փրկված կրակի բոցերից: Կառքերի հետևից զինվորները փանում էին գերի հրեաներին՝ խռովության պարագլուխներին և այլ անվանի մարդկանց, որոնց ձերբակալել էին զենքը ձեռքերին: Բոլորը շղթայակապ էին. պարագլուխների ձեռքերին և ոտքերին փայլափակում էին հասարակ ոսկե շղթաներ՝ ձուլված փաճարի հրդեհից հալված գանձերից: Ընդհանուրի ուշադրությունն էր գրավում նաև շատ գեղեցիկ, թեև ոչ երիտասարդ, արդեն քառասուն փարեկան մի կին, որը ձեռքից բռնած փանում էր չորս-հինգ փարեկան շլացուցիչ գեղեցկության մի աղջկա՝ ուսերին թափված կարմիր ոսկու գույն ունեցող շքեղ մազերով:

«Փոքրիկ Վեներա՛... փոքրիկ Վեներա՛... Աֆրոդիտե՛» - լսվում էին ամբոխի մի-



ջից հիացմունքի և զարմանքի բացական-  
ջություններ: Նրաշագեղ աղջկան ձեռքից  
բռնած քանող գեղեցիկ կինը հրեա-քրիս-  
տոնյա էր: Երբ նա դեռ փոքրիկ աղջնակ  
էր, ինչպես երուսաղեմացի շապ երեխա-  
ներ, ցանկանում էր մոտենալ Փրկչին, իսկ  
Նրա աշակերտները հեռացնում էին նրանց:  
Այդ ժամանակ Փրկիչն ասաց. «Մի՛ հեռաց-  
րեք ինձանից երեխաներին...», - և Իր ձեռ-  
քը դրեց նրա գլխին: Չքնադագեղ աղջիկը  
նրա դուստրն էր:

Այժմ հասել էր նրա և աղջկա՝ Քրիստոսի  
մոտ գնալու ժամանակը: Մայրը և աղջիկը  
մեղադրվում էին սոսկալի պեղարկան հան-  
ցագործության մեջ. Տիպոսի բանակի ռազ-  
մական խորհուրդը նրանց դաքսապարտել  
էր առյուծների կողմից հոշոտման Նոմի  
հսկայական կրկեսում:

Նանցագործությունն այսպես էր պապա-  
հել: Երբ Երուսաղեմն ավերվել և ծխում էր  
ավերակների մեջ, Սողոմն անունով այս կի-  
նը, ցանկանալով Բեթանիա հասնել, որտեղ  
ապրում էին նրա հարազատները Փրկչի ըն-

կերոջ՝ Ղազարոսի ընդհանրից, դասեր հետ  
զնաց պահակությունը ղեկավարող գորա-  
պետի մոտ՝ նրանից անցաթուղթ խնդրելու:  
Այդ պետի վրանը պապահականորեն խփել  
էին Գողգոթայի վրա, ճակատային մասում:  
Մոպենալով վրանին՝ Սողոմեն սարսափով  
տեսավ, որ հռոմեկան լեգեոնային արծիվը՝  
Նոմի պետական զինանշանը, սրբապղ-  
ծորեն խրած էր վրանի մուտքի մոտ, այն  
սուրբ փոսի մեջ, որտեղ երեսունյոթ տա-  
րի առաջ խրվել էր այն խաչը, որն իր վրա  
էր ընդունել խաչված Փրկչին: Այդ տեղը  
հավաքացյալները պահպանում էին որ-  
պես սրբատեղի, իսկ Սողոմեն ամեն տարի  
Քրիստոսի չարչարանքների և Նարության  
օրերին այնտեղ անուշահոտ յուղ էր լցնում:  
Տեսնելով պղծված սրբավայրը՝ Սողոմեն,  
արագ խլելով լեգիոնի արծիվը, թքեց նրա  
վրա, զցեց գետնին և սկսեց ոտքերով կո-  
խտել: Մարիամը՝ նրա դուստրը, կրկնելով  
մորը, նույնպես իր փոքրիկ ոտքերով կոխ-  
տում էր արծիվը... Զինվորները, տեսնելով  
կայսերական զինանշանի այդ անարգան-

քը, բռնեցին Սողոմեին և Մարիամին և քարան Տիպոսի մոտ. նա էլ բոլոր լեզեոնների պահանջով հրամայեց հանցագործներին դաբել ռազմական դաբարանով: Խեղճերին դաբապարպեցին մահապապժի՝ Նոկրկեսի հրապարակում նրանց առյուծների հոշոբմանը քալով:

«Փոքրիկ Աֆրոդիպե՛... Վերածնված Վեներա՛» - լսվում էին ամբոխի մեջ հիացական բացականչությունները:

Վերջապես եկավ գլադիատորական մրցույթների և մարդկանց՝ գազաններով հալածելու օրը: Թվում էր՝ ամբողջ Նոմը լցվել է Մեծ Կրկես, որը կարող էր քեղավորել մինչև կես միլիոն հանդիսաքեսի: Ոչինչ այնպես չէր գրավում դաժան, անսիրտ հոմեացիներին, ինչպես արյունոտ քեսարանները: Այդ օրը արյունաբերու լաբինների համար մի առանձնահատուկ հեքաքրքրություն էր Տիպոսի լեզեոներների կողմից նոր կորձանված Երուսաղեմից բերված երկու հրեա հսկաների հեք գլադիատորների մահացու մենամարտը և հրեա գեղեցկուհի

կնոջն ու նրա հրաշագեղ մանկիկին նու-  
միդիական առյուծին հոշոտման ներելը:  
Նրեա հսկաներն էին Նուդան՝ Մերսոնի որ-  
դին և Սիմոնը՝ Նաիրի որդին, որոնց հզոր  
ձեռքերից Երուսաղեմի պաշարման ժամա-  
նակ բազմաթիվ հոռմեացի զինվորներ էին  
մարտում ընկել:

Ամֆիթապրոնի օթյակները և վերնաս-  
քահները լեփ-լեցուն էին: Նրապարակին  
մոտ լավագույն փեղերը գրադեցրել էին  
հզոր սենապորները, լեզեոնների պեղերը՝  
իրենց անվանի հեծյալներով, կառավարիչ-  
ներ և հզոր Նոմի այլ ներկայացուցիչներ:  
Մնացած օթյակները լեփ-լեցուն էին Նոմի  
քաղաքացիներով, զինվորներով: Վերին  
շարքերը հսկայական ծաղկանոցի նման  
վառվռում էին ոսկեդենով զարդարված կա-  
նանցով՝ մեծահարուստ փիկնանցից մինչև  
հասարակ հոռմեացի կանայք, որոնք ծա-  
րավի էին արյունալի փեսարանների: Կայ-  
սերական ընդարձակ օթյակից ծույլ նայում  
էր Վեսպասիանոսը՝ սափրած, ճարպակա-  
լած դեմքով: Կողքին փեղավորվել էր նրա

որդին՝ Տիպոսը, որի մեծ գլուխն ամուր հենված էր հասար վզին: Կայսեր ձեռքի ծույլ թափահարումով ամֆիթատրոնը շեփորների ձայներով թնդացրին: Նրապարակ էին դուրս գալիս մարտիկները, որոնց թիվն այս անգամ շատ չէր, քանի որ Վեսպասիանոսը փրամադրված չէր երկարափն մարտի, ընդամենը երկու գույգ՝ գերմանացի գլադիատորը, որը պետք է մենամարտեր հրեա Մերտոնի որդի Սիմոնի հետ և սկյութացի գլադիատորը՝ հրեա Նաիրի որդի Նուդայի հետ:

Փողերը ոռնացին՝ մարտի հրավիրելով գլադիատորներին: Մարտիկները ներկայացան: Գերմանացին լավագույն գլադիատորներից մեկն էր, մանկուց սովորել էր կայսերական գլադիատորական դպրոցում: Նա անմիջապես հարձակվեց իր հակառակորդի վրա: Երկուսի սրերը փայլաբակեցին և վար սահեցին վահանների վրայով՝ ասես ցավի ճիչ արձակելով: Երկու հակառակորդներն էլ հմտորեն հետ էին մղում հարվածները: Նանկարծ, գերմանացին մի

կողմ ներեց իր վահանը: «Սպարտակի խորամանկությունն է, - ժպտաց Տիփոսը, - հրեան մեռավ...»: Բարձր ճոճելով իր սուրը՝ գերմանացին առանց պաշտպանվելու ուղիղ խոյացավ վահանով փակված Միմոնի վրա: Վերջինս, կանխազգալով հարվածը, փակեց վահանով կուրծքը և փորր... Նանկարձ թվաց, թե գերմանացին սայթաքեց և ընկավ ծնկների վրա... Բայց նույն պահին նրա սուրը հակառակորդի վահանի փակ մխրճվեց. ծափահարությունները ցնցեցին ամֆիթատրոնը... Ճիչերի շառա՛ջ. «Պարտված է, պարտված է»: «Պարտված չէ՛», - հասցրեց արտաբերել Միմոնը և կռանալով թշնամու գլխի վրա՝ սուրը մխրճեց նրա մարմինը... Երկուսն էլ մեռան: Նրանց փարան... Նորից հնչեցին փողերը:

- Բերե՛ք կնոջն ու աղջկան, - կարգադրեց կազմակերպիչը:

Տիփոսը ցածրաձայն ինչ-որ բան ասաց հորը:

- Ինչո՞ր թույլ փվեցիր, - հարցրեց կայսրը:

- Բոլոր լեգեոններն էին դա պահանջում. վիրավորել էին հռոմեական արծիվը:

Դանդաղ հրապարակ դուրս եկավ ամբողջովին սպիտակ հագած, ուրվական հիշեցնող մեկը: Սողոմեն բռնել էր շիկակարմիր մագերը ուսերին թափած չքնաղ աղջկա ձեռքը: Զարմանքի, հիացմունքի և դժգոհության ալիքը փարածվեց ամֆիթատրոնով:

- Նա ... նա փոքրիկ աստվածուհի՛ է...

- Տիմա մի մեծ, շատ մեծ կատու կգա ու մեզ կփանի քո հոր և այն բարի Տիսուսի մոտ, որի մասին քեզ շատ են պատմել, և Ռրի սուրբ ձեռքը ես հիմա էլ զգում եմ գլխիս վրա, - ասում էր Սողոմեն՝ փանելով աղջկան հրապարակի կենտրոն, իսկ նա հեփաբոբրասիրությամբ և մանկական միամտությամբ նայում էր չորսբլորը:

- Մահվան գնացողները ողջունում են քեզ, կայսր, - բարձրաձայնեց «կազմակերպիչը», երբ Սողոմեն և Մարիամը մոտեցան կայսերական օթյակին:

- Ահա՛, Կեսնո՛ւմ ես, փոքրի՛կս, Աստուծու պատուհանը, - ցույց տվեց Սողոմեն արևը:

- Այնպեղից մեզ վրա են նայում բարի Տի-

սուր՝ Ասարծո Ռրդին, և քո հանգուցյալ հայրիկը... Տեսնո՞ւմ ես, փոքրիկս, չար հոռմեացիները մեզանից իլեցին մեր Երուսաղեմը, այրեցին այն, իսկ բարի Նիսուրը Երկնային Երուսաղեմ ունի, ու Նա մեզ կանչում է Իր մոտ...

- Ի՛նչ գեղեցկություն, ի՛նչ ասարվածություն, - լսվում էին ձայները:

- Այս օձի ճուրը մեծացավ՝ ամուսնացածները և ջահելները խելքահան կլինեն, - լսվեց մի ճղճղան կանացի ձայն:

Նանկարծ ամպրոպի որոտներ լսվեցին: Բոլորը ցնցվեցին: Յնցվեցին նաև Սաղոմեն և Մարիամը: Սաղոմեն գունապղեց... Առյուծի մոնչյունն էր...

- Լսո՞ւմ ես, փոքրիկս, մեծ, բարի կապրուն է ուրախանում, որ հիմա մեզ երկինք կրանի՝ քո հայրիկի մոտ, Երկնային Երուսաղեմ, - ասում էր Սողոմեն՝ ցույց փալով մութ երկաթյա վանդակից դուրս թռած բրդոտ բաշով հրեշին:

Սարսափելի բանարկյալն իսկապես ուրախանում էր, փեանելով լույսը, արևը, ազապությունը: Մռայլ վանդակում երկար



անշարժ մնալուց կորցնելով լույսը, երկինքը  
փեսնելու հույսը, նա, հիմա իր գերեզմանից  
դուրս թռչելով, անսպասելիությունից խեն-  
թացել էր: Նա հիմա փեսնում էր միևնույն  
կապույտ երկինքը, նույն փաթ, վառ արևը,  
ինչպիսին ինքը գիտեր և սիրում էր իր հեռա-  
վոր, հարազատ շոգ Նումիդիայում, և նրան՝  
այդ չարամիտ գազանին, թվում էր, թե ինքն  
արդեն Աֆրիկայում է՝ Նումիդիայի անա-  
պատներում, արմավենիների մոտ: Շուրջով  
կրեսնի իր կնոջը, երեխաներին... Ահար-  
կու մոռոթով դեպի արևը բարձրացնելով  
մեծ գլուխը՝ նրան հղում էր այնպիսի իլաց-  
նող ոռնոցներ, այնպիսի ողջույնի հիմն,  
որ ամֆիթատրոնի պատերը դողում էին:  
Արևով հիանալուց հետո նա հսկա կապ-  
վի հզոր ցարկերով սկսեց հրապարակով  
մեկ պտտվել, որպեսզի վայելի շարժումնե-  
րի ազատությունը, ազատ վագրի հաճույ-  
քը, իր հզոր ոտքերի պողպատե մկանների  
պրկությունը:

- Տեսնո՞ւմ ես, փոքրի՛կս, ինչպես է խա-  
ղում մեծ բարի կապուն, - ասում էր այդ ըն-

թացքում Սաղոմեն՝ դողալով շոյելով աղջկա գլուխը:

Իսկ առյուծը նորից անթարթ նայում էր արևին, նա չէր հագենում նրան նայելուց, այնքան վաղուց չէր փեսել իր Նումփդիայի արևը, և նրա հզոր կոկորդից նորից լավեցին երկինք հասնող որոտներ: Մի քանի հսկայական թռիչք ևս անելով՝ անապարի հրեշը հանկարծ կանգ առավ: Առյուծը միայն հիմա հրապարակում նկատեց Սողոմեին և Մարիամին և զարմանքով ուշադիր նայեց նրանց: Ամբողջ ամֆիթատրոնը հուզմունքով սպասում էր, թե ինչ է լինելու...

- Ա՛խ, ինչու դարապարտեցիր երեխային, - ծերունական խղճահարությունք ցածրաձայն արտասանեց Վեսպասիանոսը:

- Լեզեոնները հենց նրան էին պահանջում. նա փրորում էր քո արծիվը...

Իսկ առյուծը կապվի նման կապով գեպնին և զարմացած աչքերը չկտրելով իրեն անհասկանալի երևույթից՝ պոչ-ավելով խփում էր գեպնին՝ դեսուդեն շաղ փալով ավազը

- Գնա՛, փոքրի՛կս, բարի կատարվի մոտ, -  
գունատված շուրթերով շնչաց Սաղոմեն:

- Իսկ բարի կատուն չի՞ ճանկոտում, -  
հարցրեց աղջիկը:

- Չէ՛, փոքրի՛կս...

Աղջիկն առաջ շարժվեց... Ահա-ահա  
հրեշը կնետվի և կհոշոտի երեխային, բոլո-  
րի սիրտը թպրտում էր:

Բայց հրեշը չնետվեց...

Ահա թե որն էր գաղտնիքը. մինչ մարդ-  
կանց գագանների առաջ նետելը չորքուրա-  
նի գլադիատորներին սովորաբար մի քանի  
օր քաղցած էին պահում և այդ պատճառով  
հրապարակ դուրս գալիս նրանք ազահո-  
րեն նետվում էին գոհի վրա:

Իսկ այդ առյուծին խնամողը մի գաղտնի  
քրիստոնյա էր: Եվ ահա իմանալով, որ իր  
բանտարկյալը հոշոտելու է մի կնոջ և աղջ-  
կա, ամեն գիշեր գաղտնի կուշտ կերակրում  
էր առյուծին...

Գագանը մինչև կոկորդ կուշտ էր և միայն  
ուրախանալ, խաղալ էր ուզում ազատութ-  
յան մեջ:

Նա ոչ մեկին չէր տեսնում, բացի սպի-  
տակ, դեպի իրեն եկող փոքրիկ էակից: «Ինձ  
հետ խաղում է», - մտածեց կուշտ գազանը  
և ճիշտ կարվի նման սկսեց սողալով ետ-  
եր գնալ... Ահա՛, ահա՛, հիմա սարսափելի  
ցարկ... Բայց չթռավ... «Տեսնո՞ւմ ես, բարի  
կարուն խաղում է», - շշնջում էր Սողոմեն:  
Առյուծը, կարծես հասկանալով նրա խոս-  
քերը, նորից կողքից կողք էր թռչկոպում,  
ասես իսկապես խաղում էր աղջկա հետ:  
Ներսո նա նորից կպավ գերանին և կարվի  
պես փորի վրա սկսեց սողալ դեպի աղջի-  
կը...

«Ո՛հ, Ողորմա՛ծ Տեր, ընդունիր խաղա-  
ղությանը նրա անարար հոգին», - Սողո-  
մեն դեպի երկինք բարձրացրեց և սարսա-  
փով փակեց աչքերը, որպեսզի չտեսնի:  
Առյուծն ուղիղ աղջկա ոտքերի մոտ էր: Իսկ  
նա կանգնած էր կախարդվածի նման: Ի՞նչ  
է սա: Չլաված հրաշք: Առյուծը լիզում էր  
փոքրիկի ոտքերը: Ամբողջ ամֆիթատրոնը  
դղրդաց կանանց ճիչերից և ծափահարութ-  
յուններից: Առյուծը՝ ամպրոպից խլացած,

վեր թռավ, նայեց նստարաններին և մարդկանցով լի վերնասրահներին, որոնց մինչ այդ կարծես չէր նկատել, և ոստյուններով սրընթաց նեղվեց դեպի իր բանարը...

- Տանն' նրանց, - հանկարծ լավեց կայսեր փիրական ձայնը: - Աստվածները խնայեցին երեխային, իսկ հանուն նրա մենք կխնայենք մորը:

*Դ. Մորդովցև*

## 14-ԱՄՅԱ ԱՂԶԿԱ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՍԽՐԱՆՔԸ

**1887** թվականի աշնանը Պետերբուրգում՝ Վիբորգյան կողմում՝ Վոսկրեսենսկ փողոցում, վեցամյա մի տղա՝ Միտյան, ինչպես հետո պարզվեց, խաղալիս փայտը ջրհորն էր նետել, որն ուներ հինգ արշին<sup>1</sup> խորություն: Ցանկանալով փայտը հանել՝ տղան ընկել էր ջրհորը և սուզվել ջրի հատակը: Շատ մարդիկ հավաքվեցին. նրանց մեջ էր նաև 14-ամյա մի աղջիկ: Նա, հագուստը նետելով վրայից, միայն շապիկով սուզվեց ջրհորը, բայց այդ փորձը չհաջողվեց. աղջիկը դուրս լողաց՝ հագիվ շունչը փակելով: Բայց և այնպես ևս երեք անգամ նա սուզվեց՝ չնայած ջրհորը լի էր կեղտոտ, գարշահոտ ջրով, որով բանջա-

<sup>1</sup> Ռուս. երկ. միավոր հնում - 0,71 մ:

րանոցներն էին ջրում: Վերջապես անձնագրի աղջկան հաջողվեց փղային դուրս բերել ջրհորից: Նավաբվածներն ընդհանուր ուժերով նրան ուշքի բերեցին:

Անձնագրհուրթյան այս սխրանքը ներկայացվեց Կայսերական Մեծությանը և, 1887 թվականի սեպտեմբերի 20-ին ողորմած կայսրը կարգադրեց, որ 14-ամյա շիսելբուրգցի աղջկան «Մահից փրկելու համար» մակագրությամբ արժաթե մեդալով պարգևատրելուց և միանվագ 25 ռուբլի վճարելուց բացի մինչև ամուսնանալը վճարել ամսական 5 ռուբլի, իսկ ամուսնանալու ժամանակ՝ նվիրել 200 ռուբլի:

## ՄՈԼԱԽՈՏԸ

**Մ**ի բարեպաշտ մայրիկ մանկահասակ դուստրերի հետ իր փոքրիկ բանջարանոցում զբաղված էր մոլախոտ քաղհանելով: Աշխատում էին արագ և ուրախ: Աղջիկներն արագ-արագ պոկում էին բանջարեղենի հետ աճած մոլախոտերը և չէին նկատում, թե ինչպես էր անցնում ժամանակը, որովհետև, բացի իրենց աշխատանքից, լսում էին մոր պատմություններն առաջին քրիստոնյա ճգնավորների մասին: Կրպսեր դուստրը աշխատանքն ավարտելուց առաջ մի հայացք նետեց մաքրված բանջարանոցին և քիչ առաջ մարգերի մեջ աչք շոյող խոտի ու բազմագույն ծաղիկների համար շատ ափսոսաց, որոնք զարդարում էին ամբողջ բանջարանոցը: «Միրելի մայրի՛կ, - ասաց նա, - ես այս մարգի մի մասը չեմ քաղհանի: Մեր բանջարանոցին նայելիս տիրում եմ.



այսպէղ ծաղկում էին անյուրայի աչուկները և ուրիշ շաք ծաղիկներ, իսկ հիմա կարծես ամեն ինչ մեռած է. ինչո՞ւմ հիանամ»:

Մայրը համաձայնեց և հարգեց դեռևս անփորձ դստեր ցանկությունը՝ վարունգի կես մարգը մոլախոտերով ծածկված թողնելով: Երկու շաքաթ անց բանջարանոցում բերքը սկսեց հասնել: Աղջիկներից կրտսերը բոլորից շաք էր սպասում, թե երբ պիտի թարմ վարունգները պոկի և համեղ գազարները դուրս հանի... Սակայն որքան մեծ եղավ նրա զարմանքը, երբ իր կիսաքաղհանած մարգի մեջ չորացած և թռչնած խոտերից բացի ուրիշ ոչինչ չգտավ:

Աղջիկը փխուր-փխուր գնաց իր բարի մայրիկի մոտ. «Մայրի՛կ, գիպե՛ս, - ասաց նա արցունքն աչքերին, - ես առաջ ուրախանում էի այն մարգին նայելիս, որը թույլ փվեցիր մոլախոտերով պատված թողնել: Նիմա այնպէղ համարյա չորացած խոտերից բացի ոչինչ չկա, մինչդեռ մեր բանջարանոցը և՛ կանաչ է, և՛ թարմ, և՛ արդեն բերք է փվել»:

Զղջման այդ հեզ խոսքերին մայրիկը պատասխանեց քնքուշ մխիթարական և կարեկցական խոսքերով: «Լսի՛ր, փոքրիկս, հիշի՛ր, որ բանջարանոցը նման է մեր հոգուն: Ինչպես բանջարանոցում, այնպես էլ մեր հոգում շաք բարի բան կա. բայց այնպեղ նաս վապը կա (և ավելի շաք): Ինչպես բանջարանոցում բարի բույսեր կան, այնպես էլ մեր հոգում՝ բարի ցանկություններ: Մոլախոտերը մեր մեղքերն ու ցանկություններն են: Ինչպես որ քեզ ցավ էր պատճառում մաքրված բանջարանոցին նայելը, որովհետև այն դապարկվել էր, այդպես էլ տխուր և ծանր է մարդու համար իր վաք սովորություններից հրաժարվելը, քանի որ առանց դրանց կյանքը նրան ձանձրալի և անշուք է թվում: Նա չի թողնում վաք սովորությունները, չի ջանում վերացնել դրանք՝ և ի՞նչ: Դրանք մարդուն հասցնում են կործանման եզրին: Նրա մեջ ամեն բարի բան մեռնում է, նա դադարում է սիրել Աստծուն, մերձավորներին և իր ծնողներին:

Երբ մահը նրան գրկում է կյանքից, նա կանգնում է Աստծո առաջ և ոչինչ չունի՝ ոչ մի բարի գործ, և միայն այդ ժամանակ է, որ արարներն այլևս հաճելի չեն թվում նրան, ինչպես խոսերը՝ քեզ. բայց մահվանից հետո ապաշխարություն չկա: Նա ենթարկվում է հավիտենական դատապարտության: Բացե՛ք, երեխանե՛ր, Մատթեոսի ավերարանը, կարդանք երրորդ գլխի վասնեւորդ համարը»:

Աղջիկներից մեկը կարդաց. *«Կացինն ահա ծառերի արմատին է դրված: Ամեն ծառ, որ բարի պտուղ չի տա, կտրվում և կրակն է գցվում»* (Մատթ. 3.10.): «Տիշե՛ք այդ տեղը և աշխատեք երբեք չմոռանալ այն, - ասաց մայրն իր զավակներին: - Անպտուղ ծառը նույնն է, ինչ մուխտարը: Դա այն մարդն է, որը բարի գործեր չի անում. այն մարդն է, որը նվիրված է արարին: Ուրեմն փախե՛ք մեղքից՝ այդ մուխտարից, որն այնքան հաճախ մարդկանց մեջ իլլացնում է ամեն բարի բան»:

## ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՈԹՔ

**Ա**յրիանալուց հետո Մարիա Ալեքսեննան իր երեք մանկահասակ երեխաների հետ ծանր կյանքով էր ապրում՝ ճունենալով գոյությունը պաշտպանելու որևէ միջոց: Նրա ամուսինը ազնվական էր և ընտանիքի բարի հայր, բայց իր աղքատիկ աշխատավարձի պատճառով կնոջ և երեխաների համար ոչինչ չէր կարողացել կուտակել: Մարիա Ալեքսեննան ամուսնուն հողին հանձնելուց հետո մտքերի մեջ ընկավ՝ ինչպե՞ս ապրել: Անհրաժեշտ էր որևէ պետական հիմնարկում աշխատանք գտնել, որտեղ բնակարան կտային և կկերակրեին. աշխատավարձը քննարկելն անիմաստ էր. միայն թե երեխաների հետ ապաստանելու տեղ գտնվեր: Այդ աշխատանքի հույսով այրին վաճառեց իր ունեցած-չունեցածը

և այդ գումարով կերակրում էր իր երեխաներին: Նրա հետք էր ապրում նաև քույրը՝ Աննա Ալեքսեննան, նույնպես այրի՝ արդեն փարեց կին: Երկու սենյականոց փոքրիկ բնակարանը աղքատիկ էր կահավորված և փխուր փապավորություն էր թողնում իր բնակիչների հետ միասին, ովքեր միայն Ասրծո օգնության հույսն ունեին՝ չսպասելով որևէ նյութական բարելավման: Բայց ահա վրա հասավ մի նոր դժբախտություն. հիվանդացավ ընտանիքի մայրը: Նիվանդությունն սկսվեց ահավոր ջերմով և կոկորդում ինչոր անձանոթ զգացողությամբ, բայց երեխաներին չվախեցնելու համար հիվանդը լռում էր:

- Մաշա՛, դու վառվում ես, - նկատեց նրա քույրը:

- Այո՛, ես շատ վատ եմ զգում, ավելի լավ է ես պառկեմ, Ասրված ողորմած է, գուցե անցնի. չէ՞ որ չենք կարող բժիշկ կանչել, նրան վճարել. դեղեր գնելու համար էլ ոչինչ չունենք, - պատասխանեց հիվանդը:

Երեկոյան նա իսկապես անկողին ըն-

կավ և սկսեց գառանցել: Նաջորդ օրը Աննա Ալեքսեննան, փեսանելով, որ գործերը վատ են, գնաց մի ծանոթ բժշկի մոտ՝ աղաչելով նրան այցելել հիվանդին: Բժիշկն առանց հապաղելու եկավ և Մարիա Ալեքսեննայի մոտ հայնարերեց սուր դիֆտերիա:

- Անմիջապես, առանց հապաղելու, պետք է երեխաներին առանձնացնել, - կարգադրեց նա, - անվտանգության համար: - Ի՞նչ եք ասում, բժիշկ, - առարկեց Աննա Ալեքսեննան, - նրանց ո՞ր ուղարկեմ: Դուք չե՞ք փեսնում մեր բնակարանը:

- Որևէ փեղ, հարազատների, ծանոթների մոտ, մի խոսքով ուր ուզում եք, բայց առանձնացնելն անհրաժեշտ է:

Երեխաները սկսեցին աղեկփուր լաց լինել:

- Մենք չե՞նք գնա ոչ մի փեղ, մենք մայրիկին կխնամենք, մենք մայրիկից չենք հեռանա...:

- Թողե՛ք նրանց Աստծու կամքին, - խնդրում էր Աննա Ալեքսեննան, - եթե մայրը մահանա, թող բոլորն էլ մահանան, ես

նրանց փանելու փեղ չունեմ, թող բոլորն էլ մահանան, - հուսահատ ասում էր նա:

- Գոնե մի՛ թողեք այս հեղձուցիչ սենյակը մտնեն, որքեղ հիվանդն է պատկած. թողնելով երեխաներին վարակիչ հիվանդության կողքին՝ դուք ինձ պատասխանավորության փակ եք դնում. ի՞նչ անեմ ես ձեզ հետ: Տիմա կգրեմ, թե առաջին հերթին ինչ է պետք անել, իսկ վաղը առավոտյան ժամը 10-ին նորից կգամ. բայց չեմ երաշխավորում, հնարավոր է, մինչև առավոտ հիվանդը չապրի:

Այս խոսքերից հետո դեղի համար գումար թողնելով՝ բարի բժիշկը հեռացավ: Աննա Ալեքսենյան անմիջապես իր զարմիկին՝ Վիպյային, ուղարկեց դեղատուն, քանի որ նա էր ընդանիբում ավագը, և կարգադրեց նրան մինչև դեղը պատրաստելը չսպասել, այլ վազելով գնալ Պանտելեյմոնի մատուռը և յուղ վերցնել կանթեղից:

- Եվ աղոթի՛ր հիվանդի համար, - հետևից գոռաց մորաքույրը: Աղջիկները՝ յոթնամյա Կատյան և ութամյա Մանյան, հիվանդ մոր

անկողնու մոտ էին, և նրանց անհնար էր մյուս սենյակ փանել: Նրանք լացում էին ու համբուրում նրան՝ ջանալով գոնե մի ձայն լսել նրանից:

- Մայրի՛կ, մայրի՛կ, արթնացի՛ր, սիրելի՛ մայրիկ, ջնեռնես, սիրելի՛ մայրիկ, գոնե մի բառ ասա:

Աննա Ալեքսենյան հավաքում էր, որ այն, ինչ մարդկանց համար անհնար է, հնարավոր է Աստծու համար և Նրան դիմեց ջերմեռանդ աղոթքով, նույնը սովորեցրեց նաև երեխաներին:

- Մանյա՛, Կապյա՛, եթե սիրում եք մայրիկին, աղոթե՛ք Աստծուն, որ որք չմնաք: Կանգնե՛ք սրբապատկերների առաջ և ջերմեռանդորեն աղոթե՛ք Աստծուն՝ ձեր մայրիկի բժշկության համար, աղաչե՛ք Երկնային Թագուհուն և Աստծուն հաճելի բոլոր սրբերին: Ես մի օրհներգ ունեմ՝ ուղղված բժիշկ Պանսելեյմոնին, կարդացե՛ք այն և աղոթե՛ք:

Աղջիկները հավաքքով ծնկի իջան: Նրանք փպագիր թուղթը իրենց հարմա-



րության համար բացված դրեցին հապա-  
կին և սկսեցին բարձրաձայն կարդալ օր-  
ներգությունը՝ դառնագին արտասովորով:  
Օրհներգությունը տպագրված էր եկեղե-  
ցական-սլավոններենով, ինչը դժվարացնում  
էր նրանց գործը. նրանք հազիվ էին հասկա-  
նում բառերը և իրենց դառն արցունքներով  
թրջում էին թուղթը: Մանյան երկար ժա-  
մանակով չէր թողնում մորը և հաճախակի  
վազում էր ննջասենյակ՝ նրան նայելու, իսկ  
Կապյան, ծնկներից ջբարձրանալով, հեկե-  
կալով աղոթում էր՝ կրկնելով իր սեփական  
աղոթքը. «Տե՛ր Աստված, փրկի՛ր մեր մայ-  
րիկին: Աստծո ընտրյալ Սո՛ւրբ, բուժի՛ր մեր  
մայրիկին»:

Աննա Ալեքսենյանն ափսոսում էր, որ չի  
հասցրել խնդրել քահանային հաղորդու-  
թյուն տալ մեռնող քրոջը և, նստած ականջ  
էր դնում հիվանդի կրծքում լսվող խզխզո-  
ցին՝ սպասելով նրա վախճանին:

Բայց ահա եկավ նրա զարմիկ Վիտյան՝  
արագ քայլից հազիվ շունչը տեղը բերե-  
լով: Նա մորաքրոջը տվեց դեղատնից բե-

րած դեղը և Ս. Պանսելեյմոնի մապուռից վերցրած յուղը: Նավապը հույս ծնեց, և Աննա Ալեքսեննան արագ վերցրեց մապուռից բերած բուժիչ յուղը՝ դեղը մի կողմ դնելով: Աղոթելով՝ նա սկսեց յուղը քսել հիվանդի ամբողջ մարմնին և այդպես մոտ կես ժամ, իսկ երեխաներն անդադար աղոթում էին: Նանկարծ հիվանդը բացեց աչքերը և թույլ ձայնով հարցրեց.

- Այդ ի՞նչ խոսեր ես մարմնիս քսում: Շատ բուրավետ են և մարմնիս էլ հաճելի:

- Այս յուղը բժիշկ Պանսելեյմոնի կանթեղից է:

- Ահա թե ի՞նչ, ես չգիտեի, - և հիվանդը բարձրացրեց ձեռքը խաչակնքվելու համար: Աննա Ալեքսեննան ամբողջ յուղը քսեց, այնուհետև փաթաթեց հիվանդին տաք վերմակով: Երեխաները, արցունքներից և ջերմեռանդ աղոթքներից հոգնած, շուտով քնեցին չոր բազմոցին, իսկ նրանց մորաքույրը նստել էր բրոջ կողքին՝ աչքը չկարելով հիվանդի գլխավերևում կախված Ս. Պանսելեյմոնի փոքրիկ պատկերից: Նա

արդեն չէր կարողանում աղոթել, նա միայն նայում էր փոքրիկ պատկերին, ինչպես նայում են բժշկին, որի արվեստին հավատում են և հիվանդին հանձնում նրա փնտրիւթյանը: Ականջ դնելով քոջ շնչառությանը՝ նա նկատեց, որ հիվանդը սկսել էր ավելի հավասար և հանգիստ շնչել: Այդպես անցավ ամբողջ գիշերը:

Առավոտյան՝ ժամը ութին, հիվանդը խնդրեց փոխել իր սպիտակեղենը, որովհետև շատ էր քրտնել: Նա ինքնուրույն նստեց անկողնում, խաչակնքվեց և թեյ խնդրեց: Ուրախացած Աննա Ալեքսեննան անմիջապես կատարեց նրա բոլոր պահանջները: Ժամը տասին եկավ բժիշկը և զգուշորեն մտնելով՝ հարցրեց՝ կենդանի՞ է արդյոք հիվանդը:

- Մտե՛ք նրա մոտ, նա այսօր ավելի լավ է, - պարասխանեց Աննա Ալեքսեննան:

Բժիշկը մտավ և կանգ առավ՝ իր աչքերին չհավատալով: Նայեց ձեռք չբռնած դեղին և հարցրեց.

- Ինչո՞վ եք նրան բուժել:

- Ահա՛ բժիշկը, - պատասխանեց Աննա Ալեքսեննան՝ ցույց տալով Ս. Պանարելեյմոնի սբապարկերը, - ահա՛ և դեղը, - ցույց տալով յուղի սրվակը:

Բժիշկը քննեց հիվանդին և բացականջեց.

- Դե՛, ուժեղ է ձեր հավապը: Այս հրաշքն Աստված է գործել. այլ կերպ չեմ կարող բացատրել: Գիտե՛ք, որ Մարիա Ալեքսեննան հիվանդ էր սուր դիֆտերիայով, և ես հույս չունեի նրան կենդանի տեսնել, իսկ հիմա այդ հիվանդության հետքն անգամ չկա: Ես շրապում էի իմանալ իմ դեղի ազդեցության արդյունքը, իսկ դուք նրան չեք էլ դիպել:

- Ներեցե՛ք, բժիշկ, ես այնքան հուսահատ էի, որ հավատում էի միայն Աստծու օգնությանը և այդ պատճառով այս յուղը ձեր դեղից գերադասեցի:

- Մենք աղոթում էինք մայրիկի համար, - ասաց փոքրիկ Կատյան, - ահա Աստված էլ բժշկեց: Բժիշկ, ասացեք բոլոր հիվանդներին, որ աղոթեն Աստծուն և կարդան Ս. Պանարելեյմոնին ուղղված օրհներգություն-

նը: Չէ՛ որ դուք հավարում եք, որ այդ նա է բժշկել մեր մայրիկին:

- Նավարում եմ, երեխաներ, հավարում եմ, սա իմ բժշկական փորձառության մեջ առաջին դեպքն է: Ես վապր քրիստոնյա եմ, բայց և այնպես խորհուրդ եմ փալիս, երբ ձեր մայրիկը լրիվ կազդուրվի, գնացեք միասին և շնորհակալական աղոթք մարուցեք: Նիմա ես համարձակորեն շնորհավորում եմ ձեզ, Մարի՛ա Ալեքսեննա, շուր առողջանալու համար: Միայն Աստված ձեզ կարող էր պոկել մահվան ճիրաններից:

Այս խոսքերով բժիշկը գնաց՝ ուրախ ու գարմացած: Մարիա Ալեքսեննան, իսկապես, շուրով կազդուրվեց:

## ԵՂԻՐ ՆԵՐՈՂԱՄԻՏ ԵՎ ՀԵԶ

Չեր հանդեպ չարացած մարդը հիվանդ մարդ է: Նրա սրտին պետք է դնել սպեղանի՝ սեր. պետք է գուրգուրել նրան, նրա հետ խոսել քնքշանքով, սիրով. եթե նրա մեջ ձեր հանդեպ արմատացած բարկություն չկա, այլ միայն ժամանակավոր բռնկում, պիտի տեսնեք, թե ինչպես նրա սիրտը կամ բարկությունը կհավեն ձեր քնքշանքից և սիրուց, թե ինչպես բարությունը կհաղթի չարին: Քրիստոնյան միշտ պետք է լինի բարի, իմաստուն, որպեսզի բարությանը հաղթի չարին:

*Ս. Նովիան Կրոնչուրադսկի*

## ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Լիզայի ծնողներն աղքատ, բայց ազնիվ ու աշխատասեր մարդիկ էին: Լիզան շատ բարի և բնքուշ աղջնակ էր, և հարևան բոլոր երեխաները նրան սիրում էին՝ նրա հարգալից և բարի վերաբերմունքի համար: Բոլորը հաճույքով խաղում էին նրա հետ, չնայած նրան, որ Լիզան բոլորից աղքատ էր և չուներ այնպիսի գեղեցիկ հագուստներ, ինչպիսին ուներ Նաբաշան, Նասսայան և մնացած ընկերուհիները: Նրանք նայում էին ոչ թե հագուստին, այլ սրտին, որն, իհարկե, ավելին թանկ է, քան ամեն արեսակ մեքսիկոյա կամ թավշյա բուրձը:

Նանկարծ Լիզայի հետ փոխոխություն եղավ: Նրա ծնողները մեծ ժառանգություն ստացան և հարստացան: Լիզան երևակայեց, որ ինքն իր ընկերուհիներից բարձր է,

և շար գոռոզացավ: Նախկին բարի և սիրալիր վերաբերմունքից հետք անգամ չէր մնացել: Նապաշան, Նասպյան և մյուս ընկերուհիները սկզբում զարմացան, իսկ հետո սկսեցին ծիծաղել նրա վրա: Ի վերջո, Նասպյան նրան ասաց. «Լսի՛ր Լիզոզկա՛, դու հիմար աղջիկ ես: Եթե չփոխես քո վերաբերմունքը, կմնաս մենակ. մենք քեզ հետ չենք խաղա: Ուշքի՛ արի»: Այդ խոսքերից Լիզան կնճռոպեց դեմքը, շրջվեց ընկերուհիներից և ասաց. «Տիմա ես հարուստ եմ. ընկերուհիներ կգտնվեն»: Բայց նա սխալվում էր. երեխաները նրան թողեցին. Լիզան, ընկերուհիներից լքված, շուտով շար կարոպեց նրանց: Նա միայն հիմա տեսավ, թե ինչքան տհաճ է միայնակ լինելը: Պարուհանի մոտ նստած՝ Լիզան լալիս էր՝ նայելով իր նախկին ընկերուհիների ուրախ խաղերին: Մայրը նկատեց այդ փոփոխությունը և հարցրեց նրան. «Ինչո՞ւ չես խաղում ընկերուհիներիդ հետ»: Սկզբում Լիզան ամաչում էր ասել պատճառը, բայց մոր պնդումներից հետո խոստովանեց իր



հիմար արարքը, ինչպես նաև այն, որ արդեն վաղուց գղջում է իր մեծամարտության համար:

- Գնա՛, հենց հիմա ընկերուհիներիդ մոտ, ներողություն խնդրիր նրանցից, - ասաց մայրիկը: - Եվ հիշի՛ր, որ ոչ թե հարսությունը, այլ քնքուշ և սրտակից վերաբերմունքն է մարդուն դարձնում սիրելի: Ո՛ւմ է պերք, դու հարուստ ես, թե՛ աղքատ: Մի՛թե նրանք օգտվում են քո հարսությունից: Թո՛ղ հիմար մեծամարտությունդ և թույլ մի՛ փուր, որ չարը արմատ գցի քո սրտում: Լիզան անմիջապես հետևեց մոր խորհրդին, վազեց ընկերուհիների մոտ, մեղմորեն նրանցից ներողություն խնդրեց իր մեծամիտ վերաբերմունքի համար և նորից ուրախությամբ ընդունվեց երեխաների ուրախ խմբի կողմից: Իմիջիայլոց, այս դիպվածը լավ ազդեցություն ունեցավ նրա վրա. այդ օրվանից նա այլևս չէր պարծենում իր հոր հարսությամբ:

## ԱՍՏՅՎԱԾՔՆԵՐ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԱՊՐԵԼ

Ընկեր չունես, ուրեմն փնտրիր, իսկ եթե ունես՝ պահպանիր:

Նոր ընկերներ ձեռք բեր, բայց հներին մի՛ կորցրու:

Ընկերոջ համար ոչինչ մի՛ խնայիր:

Թանկ է օգնությունը աղքատության ժամանակ:

Բարի գործի մասին համարձակ խոսիր:

Բարին չի՛ մեռնի, իսկ չարը կկորչի:

Մի՛ ապրիր «ով հզոր է՝ թող կուլ փա ուրիշին» սկզբունքով, այլ ապրիր՝ մարդկանց համար անելով այն, ինչ կանեիր քեզ համար:

Նիմարները միմյանց կործանում են, խեղդում, իսկ խելոքները սիրում են և միմյանց օգնում:

Բարիք գործողին Ասարված է օրհնում:  
Որբին կերակրողին Ասարված չի մո-  
ռանա:

Պատուհանից արուր, Ասարված դռնով  
հետ կվերադարձնի:

Բարի մարդու սիրտը ցավում է ուրիշի  
հիվանդության համար:

Փոս փորողն ինքը կընկնի մեջը:

Չարակամությունից և նախանձից ո՛չ  
օգուտ կա, ո՛չ ուրախություն:

Ասարված արեսնում է, թե ով ում է նեղաց-  
նում:

## ԻՆՉ ԵՆ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ՄԵՋ ՄԵՂՈՒՆԵՐԸ

Ծնողների հանդեպ սերը Աստված դրել է բոլոր մարդկանց սրտերում, բայց ի՞նչ ասենք մարդկանց մասին: Նայե՛ք մեղուներիին. նրանք իրենց մայր մեղվին (այսինքն՝ մեղուների թագուհուն) չեն թողնում նույնիսկ այն ժամանակ, երբ նա արդեն իրենց համար ոչինչ չի կարող անել և ընկնել է փեթակի հափակին վիրավոր կամ հիվանդ: Նսարավոր չէ առանց կարեկցանքի նայել, թե ինչպես են Աստծո սրեղծած այդ հրաշք կենդանիներն ամբողջ ուժով ջանում իրենց մորը վեր հանել հափակից. նրանք իջնում են, մեկը մյուսի հետևից շղթա են կազմում փեթակի հափակին և իրենցով աստիճան են կազմում այն հույսով, որ մայր մեղուն այդ աստիճանով կբարձրանա վեր, որպեղ

նրան հոգաբար վերաբերմունք է սպասվում: Իսկ եթե նա այնքան է ուժասպառ եղել, որ չի կարողանում փեղից վեր կենալ, նրա մոտ մնում են մի քանի մեղու, որոնք կերակրում են հիվանդ մայր մեղվին և փաքացնում՝ սեղմվելով նրան: Նուզիչ է փեսնել, թե ինչպես այդ ժրաջան գավակներն իրենց մորը չեն լքում անգամ այն ժամանակ, երբ նա սափկում է. նրանք թնիկները թափահարում են նրա գլխավերևում, կարծես ցանկանում են կենդանացնել նրան, և միայն այն ժամանակ, երբ փեսնում են, որ ամեն ինչ իզուր է, աղիողորմ բզզոցով հեռանում են նրանից:

Այդ փեսնելով՝ ակամայից մտածում ես. «Մոտեցե՛ք, բանակա՛ն մարդիկ, սովորե՛ք այս փոքրիկ արարածներից ոչ միայն նրանց խելքն ու իմաստությունը, նրանց աշխատասիրությունը, հոգաբարությունը, նրանց սերն իրենց ձագուկների՝ երիտասարդ մեղունների հանդեպ, այլև հիացե՛ք մոր հանդեպ նրանց սիրով, սովորե՛ք նրանցից նաև այդ առաքինությունը»: Բայց չե՛ որ

մենք կենդանիներ չենք, մենք ինչ-որ վայրենիներ չենք, ոչ էլ Աստուծոյն չճանաչող հեթանոսներ: Տեր Աստուծոյն մեզ ասել է. «Պատրիարքն ասէ՛ր որ աստուծոյն յարմար օրեր կատարես երկրի վրա»: Այդ պատրիարքն մասին շար-շար են գրել Նին Կրակարանի մեծ ուսուցիչները, սովորեցրել են մեզ սուրբ առաքյալները և միշտ սովորեցրել ու սովորեցնում է մեր սուրբ մայրը՝ Առաքելական եկեղեցին: Այն մեզ սովորեցնում է. «Ով պատրիարք է իր հորը և մորը, Նրան Աստուծոյն ուղարկում է իր օրհնությունը և երկար կյանք, իսկ ով չի կատարում այդ սուրբ պատրիարքն, նրան հասնում է Աստուծոյն բարկությունը»: Ահա թե ինչ է սովորեցնում մեզ իմաստուն Նեստուն՝ Սիրաքի որդին. «Նորը հարգողը, - ասում է նա, - կմաքրի իր մեղքերը»: Ի՞նչ է դա նշանակում: Ահա թե ինչ. Տերն այնքան բարձր է դասում երեխաների սերը ծնողների հանդեպ, որ ներում է մեր մեղքերը, եթե մենք ամբողջ հոգով սիրում ենք մեր ծնողներին, եթե ջանասիրաբար ծառայում ենք նրանց

իրենց անկարողության և ծերության ժամանակ, եթե չենք խնայում մեր ունեցածը նրանց համար: Եվ փա՛ռք Աստծո, բազմաթիվ են այնպիսի քրիստոնյաները, ում սերն իրենց ծնողների նկատմամբ արժանի է գովասանքի:

## ՏԱՏԻԿԻ ԺԱՄԱՅՈՒՅՅԸ

- **Տ**ապիկ, ինչո՞ւ ես ամեն անգամ հաշվում, երբ խփում է պապի ժամացույցը, և դրանից հետո ինչ-որ բանի մասին ես մտածում, - հարցրեց յոթնամյա աղջնակն իր սիրելի փապիկին՝ մոտ վազելով և ծնկներին բարձրանալով, երբ ժամացույցը խփեց փասներկուսը:

- Միրելի՛ս, այդ հարվածները հաշվում եմ սովորության համաձայն, երբ մտածում եմ, որ ամեն ժամի հետ կյանքս ավելի է կարճանում, իսկ մահը ավելի ու ավելի է մոտենում ինձ: Նենց որ զանգը խփում է, ես մտածում եմ մի ժամ ևս իմ կյանքից թռավ դեպի հավերժություն. այս աշխարհում մի ժամով ևս պակասեց կյանքս: Ժամացույցի զանգերն ասես թաղման զանգեր լինեն. նրանք հիշեցնում են ինձ, որ մի օր էլ կխփի նաև իմ



կյանքի վերջին գանգը, որից հետո հուղարկավորության գանգերը կհայտարարեն իմ այս կյանքի ավարտի մասին:

- Տարի՛կ, ինչո՞ւ ես մտածում ու հիշում այդ մասին: Դա քեզ դո՞ւր է գալիս: Ուզում ես մեռնե՞լ:

- Մեռնել չեմ ուզում, փոքրի՛կս, բայց մահն էլ մեզ չի հարցնում, թե երբ գա: Իսկ ես այն փարիքում եմ, որ ուզես, թե չուզես մտածում ես մահվան մասին: Էլ ի՞նչ քրիստոնյա, որ վախենում է մտածել մահվան մասին: Մեր Տերը պատվիրել է մահվան մասին մտածել ամեն օր, ամեն ժամ նրան սպասել, որպեսզի նախապատրաստվենք ապագա կյանքին: Ահա երբ խփում են գանգերը, ես մտածում եմ, որ ես մեկ ժամով իմ կյանքը կարճացավ: Ի՞նչ լավ ու վատ բան եմ արել ես անցած մեկ ժամվա մեջ: Ավելի լավն եմ դառնում, թե՞ ոչ, և պատրաստ եմ արդյոք մահվանից հետո կանգնել Աստծո առաջ: Եթե ես անցյալում մի վատ բան եմ արել կամ ասել, ապա Աստծուն կխոստովանեմ իմ մեղքերը և դրանից

հետո վապ գործերից ու վապ խոսքերից ինձ հետ կպահեմ: Տանեցիներից մեկը եթե վապ բան անի, վապ խոսք ասի, կամ էլ դու չարաճճիություն անես, ես կհիշեմ մահվան մասին և ինձ հետ կպահեմ բարկությունից ու կոպիտ խոսքերից, դրա փոխարեն քեզ և ուրիշներին քնքշանքով ու սիրով դիպողություն կանեմ:

- Ես էլ սրանից հետո այդպես կանեմ. հենց որ ժամացույցի զարկերը հնչեն, կհիշեմ մահվան մասին և կանեմ այն, ինչ որ դու ես անում:

- Լավ է, փոքրիկս, բոլոր քրիստոնյաներն այդպես պիտի վարվեն. բայց քո ուժերը դեռ չեն ների. մի՛ խոստացիր, եթե չես կարող կատարել: Երբ մեծանաս՝ ձգտիր այդպես անել: Իսկ հիմա, երբ ժամացույցի զարկերը հնչեն, մտածիր՝ ահա ևս մի ժամ ավելացավ իմ կյանքին. ի՞նչ եմ արել այդ ժամի ընթացքում. ի՞նչ եմ սովորել, ի՞նչ նոր բան եմ իմացել: Եթե ինչ-որ բան բաց ես թողել կամ մոռացել ես անել՝ շտապի՛ր կատարել: Եթե մեկին նեղացրել ես կամ նե-

ղացել ես որևէ մեկից, շտապի՛ր հաշտվել, և հաջորդ ժամվա ընթացքում աշխատի՛ր անցած ժամվա քո վատ արարքները չկրկնել: Ժամ առ ժամ դու ավելի խելացի և բարի կդառնաս. կաճես հոգով և մարմնով:

- Լս՛վ, Կապի՛կ, այսուհետև այդպես կանեն:

- Տերը թող օրհնի քեզ, իմ բարի՛ փոքրիկ:

## ԳԱՂՏՆԻՔ

**Մ**ի շենքում երկու փոքրիկ բույրեր էին ապրում, որոնց միշտ պեսնում էին ուրախ խաղալիս, որովհետև նրանք միշտ հաշտ էին իրար հետ: Նրանց գրքերն ու խաղալիքներն ընդհանուր էին, բայց նրանք երբեք չէին վիճում. չէին լավում բարկացկոտ խոսքեր, չէին երևում թշնամական հայացքներ: Նրանք դրսում, թե պանը խաղալիս, մայրիկին ինչ-որ բանով օգնելիս միշտ լավ փրամադրություն ունեին:

- Ինձ թվում է, որ դուք երբեք չեք բարկանում, - ասացի ես մի անգամ: - Ինչի՞ց է, որ միշտ գոհ եք միմյանցից:

Նրանք նայեցին ինձ, և նրանցից ավագը պատասխանեց. «Դա նրանից է, որ մենք ամեն ինչում զիջում ենք միմյանց»:

Ես մի պահ մտածեցի: Այո՛, արդարացի է.

դու գիջում ես նրան, նա՛ քեզ: Այդ փոքրիկ, բարի բույրիկները բացահայտել են հանգիստ և ուրախ կյանքի գաղտնիքը: Նրանք միշտ գիջում են միմյանց՝ ջանալով հաճելի բաներ անել մեկմեկու: Նրանք բարի են, գիջող, պարզասիրտ են. ինքնահավան չեն և միշտ պատրաստ են օգնել միմյանց: Նիմա հասկանալի է, թե ինչու են նրանք այդքան երջանիկ: Այդ պատճառով էլ բոլորը սիրում են նրանց:

## ՄԻ՝ ՀՐԱՊՈՒՐՎԵՔ ԵՐԿՐԱՅԻՆ ԻՐԵՐՈՎ

**Ի**նչպես մանկիկի համար միևնույնն է, թե ինչ հագուստ է հագել, այնպես էլ քրիստոնյան՝ Քրիստոսի մանուկը, պեք է անսարքեր լինի երկրային հագուստների բազմազանության, հարստության և շքեղության հանդեպ՝ համարելով, որ իր ամենալավ ու չինացող հագուստը Քրիստոս Աստվածն է: Որովհետև թանկարժեք, գեղեցիկ հագուստների նկատմամբ մոլուցքը հատուկ է այս աշխարհի մարդկանց կամ հեթանոսներին, ինչպես ասում էր Տերը (Մատթ. 6.31), որովհետև հագուստն այս աշխարհի մարդկանց կուռքն է: Օ՛, որքան ունայն ենք մենք. մենք, որ կոչված ենք հաղորդակցվելու Աստծո հետ և խոստում ունենք անասական ու անմահ բարիքները

ժառանգելու: Որքա՛ն սխալ են մեր ըմբռնումները ապականացու իրերի և անապական բարիքների մասին: Որքան անմիտ ենք, երբ արժևորում ենք ամենաաննշան առարկաները և չենք գնահատում մեր անմահ հոգու բարիքները՝ խաղաղությունը, ուրախությունը, քաջությունը Աստուծու առջև, սրբությունները, խոնարհությունը, համբերությունը, ընդհանրապես, ճշմարիտ քրիստոնյայի բոլոր հատկությունները:

Այսպիսով, պետք է գնահատել հոգևոր բարիքները, քաջությունը, իսկ նյութականը՝ իբրև ապականացու, անէական, արհամարհելի:

*Ս. Նովիան Կրոնչբրադի*

## ԱՄԵՆԱԶՈՐԵՂ ՍԵՐԸ

«Նորածին Պավելը և Օլգան, - գրում էր իր օրագրում սուրբ Նովիան Կրոնշտադցին, - Բարձրյալի ողորմությամբ և իմ աղոթքներով բժշկվեցին ծանր հիվանդությունից: Փոքրիկ Պավելի հիվանդությունը բժշկվեց քնով, իսկ փոքրիկ Օլգան խաղաղվեց և նրա դալուկ դեմքը լուսավորվեց:

Ինն անգամ գնացել եմ աղոթելու՝ այն հանդուգն հույսով, որ հույսը չի ամաչեցնում, որ բախողի առջև բացվում է, որ գոնե անկոտրում կամքի համար Տերը խնդրածս կտա: Եթե անհրավ դաքավորը, ի վերջո, բավարարեց իրեն անհանգստացնող կնոջ պահանջը, ապա առավել ևս բոլորի Արդար Դաքավորը անմեղ երեխաների համար մեղավորիս աղոթքը կլսի, որ Նա կնայի իմ ջանքերին, իմ քայլերին, աղոթքի խոսքե-



րին և ծնրադրություններին, իմ արիությանը, իմ ապավինությանը:

Այդպես էլ արեց Տերը, ինձ՝ մեղավորիս, ամոթահար չթողեց: Տասներորդ աղոթքից վերադառնալով՝ երեխաներին առողջացած գրա: Գոհություն հայտնենք Տիրոջը և արագահաս բարեխոս Ս. Ասրվաձաձին»:

Ահա թե ինչպես հայր Նովիան Կրոնշտադցու սերը բժշկեց երեխաներին:

*Նախանձախնդիր եղիր սիրո մեջ.  
ամեն ինչ կանցնի, իսկ սերը հավերժ  
կմնա, ինչպես ինքն Ասրվաձ, որ Սեր  
է:*

*Ս. Նովիան Կրոնշտադցի*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թարգմանչի կողմից.....	5
Աստվածամոր մանկությունը և պատանեկությունը.....	7
Մարիամի զարդը.....	14
Քրիստոնյա աղջիկը.....	18
Կախարդական ակնոցը.....	31
Անմոռուկը (լեգենդ).....	35
Մեծահոգի աղջիկը.....	38
Երեք փոքրիկ քրիստոնյա աղջիկները..	41
Թանկարժեք կոպեկը.....	46
Դուք ևս օգնեք, երեխաներ.....	48
Նահատակ աղջիկը.....	51
Հռոմեական կրկեսում.....	55
14-ամյա աղջկա հերոսական սխրանքը.....	70
Մոլախոտ.....	72
Մանկական աղոթք.....	76
Եղիր ներողամիտ և հեզ.....	86
Ժառանգություն.....	87
Ասացվածքներ այն մասին, թե ինչպես պետք է ապրել.....	90
Ի՞նչ են սովորեցնում մեզ մեղուները.....	92

Տատիկի ժամացույցը.....	96
Գաղտնիք.....	100
Մի հրապուրվեք երկրային իրերով.....	102
Ամենագորեղ սեր.....	104

# ՓՈՔՐԻԿ ՔՐԻՍՏՈՆՅԱՅԻՆ

*Թարգմանությունը յուսերենից՝*

Կարինն Բարայանի

*Խնդրագրումը՝*

Արմինն Պողոսյանի

*Էջադրումը՝*

Տ. Մարկոս քն. Մանգասարյանի

*Շապիկը՝*

Արմենն Սահակյանի



Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:

Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)

Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)

Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63

Էլ. փոստ՝ [info@asoghik.am](mailto:info@asoghik.am)